ԳԼՈԲՈՒՍ

Հրատարակվում է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աջակցությամբ

6 (75)

ԵՐԵՎԱՆ

2016

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 6 (75), 2016

«ԳԼՈԲՈՒՍ» ՏԵՂԵԿԱԳՐԻ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աշոտ Թավադյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

Աշոտ Թևիկյան
ՀՊՏՀ տնտեսամաթեմատիկական մեթոդների և Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի կառավարման ամբիոնների դասախոս, տ.գ.թ.

Գագիկ Հարությունյան (համակարգող)
«Նորավանք» ԳԿՀ գործադիր տնօրեն, ք.գ.թ.

Էդուարդ Լ.Դանիելյան
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հին դարերի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ.

Կարեն Վ.Կարապետյան
Տնտեսագիտության դոկտոր

Մուշեղ Լալայան
ՀՀԿ փոխնախագահ

Սամվել Մանուկյան
IPSC Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտի վերլուծաբան, ս.գ.թ.

Վահագն Ագլյան
«Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի ղեկավար, ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ

Վարդան Աթոյան
«Նորավանք» ԳԿՀ փոխտնօրեն, տ.գ.թ., դոցենտ

Վարդան Հարությունյան
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ վարչության նախագահ-գլխավոր տնօրեն, տ.գ.թ.

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր
Գագիկ Հարությունյան

Գլխավոր խմբագրի տեղակալներ
Վահագն Ագլյան
Վարդան Աթոյան

Պատասխանատու խմբագիր
Խոնարհիկ Քարաուղլանյան

Պատասխանատու քարտուղար
Լուսինե Բաղրամյան

Խմբագիրներ
Աննա Ժամակոչյան
Արեստակես Սիմավորյան
Դիանա Գալստյան
Վահրամ Հովյան
Տիգրան Ղանալանյան

Էջադրող-ձևավորող
Տաթևիկ Քարաուղլանյան

ԳԼՈԲՈՒՍ

Թիվ 6 (75), 2016

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Դիանա Գալստյան, Մարիամ Խալաթյան
Օտարերկրյա կապիտալի սահմանափակումը ԶԼՄ-ում 4

Սամվել Մարտիրոսյան
ՀՀ պետական համակարգում
բաց տվյալների շտեմարանների խնդիրների վերաբերյալ 10

Էդուարդ Լ.Դանիելյան
Միաստվածության գաղափարը հայ բնափիլիսոփայական մտքի պատմության մեջ 17

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ

Վահրամ Հովյան
Սփյուռքի վտանգվածության ինդեքսը 23

ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ԱՇԽԱՐՀԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՆՑՔ

Սամվել Մանուկյան
«Հյուսիս-Հարավ» ինովացիոն ինտեգրում.
ռազմավարական նախադրյալներ և խոչընդոտներ 32

Արմեն Մանվելյան
Հյուսիս-Հարավ միջանցքին Հայաստանի և Ադրբեջանի
մասնակցության հեռանկարները 39

Ջոնի Մելիքյան
Վրաստան-Իրան փոխհարաբերությունները և Հյուսիս-Հարավ միջանցքը 48

Ռոման Կարապետյան
Իրան-Հայաստան-Վրաստան-Ռուսաստան
համագործակցության զարգացման հեռանկարները 56

Արմեն Մանվելյան
Նավթի գնագոյացման մեխանիզմները
և դրանց քաղաքական ու տնտեսական բաղադրիչները 62

Հուշագիր հեղինակին 69

ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿԱՊԻՏԱԼԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ ԶԼՄ-ՈՒՄ

Դիանա Գալստյան[*], *Մարիամ Խալաթյան*[**]

Տեղեկատվական պատերազմների նպատակներից է հակառակորդի տեղեկատվական դաշտ ներթափանցումը, սեփական տեղեկատվական տարածքի վերահսկողությունը, մրցակիցների կողմից հարձակումներից պաշտպանությունը: Հակառակորդ պետության դեմ տեղեկատվական պատերազմ իրականացնելու միջոցներից է տեղեկատվության և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը, որտեղ առանցքային է ԶԼՄ-ի դերը տեղեկատվության տարածման և հասարակական կարծիքի ձևավորման տեսանկյունից: Ուստի դրանց տիրապետումը թույլ կտա վերահսկել տեղեկատվության տարածման և ուղղորդման գործընթացը մրցակից երկրի հասարակության ներսում: Սեփական տեղեկատվական դաշտի վերահսկողության մեխանիզմներից է օտարերկրյա կապիտալի սահմանափակմանն ուղղված օրենքների ընդունումը տարբեր երկրներում: Օրենքի ընդունման կողմնակիցները դրա անհրաժեշտությունը պայմանավորում են այն հանգամանքով, որ ֆինանսական միջոցների տրամադրումն ազդում է մեդիա դաշտի բովանդակության ձևավորման վրա: Արտասահմանյան ներդրումների, ինչպես նաև լրատվամիջոցների սեփականության հետ կապված խնդիրները տարբեր երկրներում կարգավորվում են հիմնականում «ԶԼՄ-ների մասին օրենքներով», իսկ որոշ երկրներում ընդունված կամ ընդունման գործընթացում գտնվող «օտարերկրյա գործակալների մասին» օրենքով: Արտասահմանյան ներդրումների սահմանափակումներ առկա են մի շարք երկրների օրենսդրություններում:

Առաջին խմբին են դասվում այն երկրները, որոնք մասամբ են սահմանափակում ԶԼՄ արտասահմանյան ֆինանսավորումը: Օրինակ՝ Ֆրանսիայում օրենքը օտարերկրացիներին արգելում է 20% բաժնետոմսեր ունենալ հեռուստա- և ռադիոընկերություններում: Իսկ տպագիր մամուլի դեպքում ԵՄ անդամ չհան-

[*] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի ղեկավարի տեղակալ:
[**] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ:

դիսացող երկրները չեն կարող դառնալ թերթերի լիիրավ սեփականատերեր, նրանց մասնաբաժինը չի կարող գերազանցել 20%-ը, սակայն այս սահմանափակումը տարածվում է միայն ֆրանսալեզու թերթերի և օրաթերթերի վրա[1]:

ԱՄՆ-ը արգելում է օտարերկրյա քաղաքացիներին, կազմակերպություններին և պետական մարմիններին տիրապետել հեռտուստա- և ռադիոընկերությունների 25%-ից ավելի բաժնետոմսերին: ԱՄՆ-ում օտարերկրյա ֆինանսավորմանն առնչվող ցանկացած գործունեություն կարգավորվում է *FARA*-ի (*The Foreign Agents Registration Act*)[2] շրջանակներում: Որոշ բացառություններով օրենքը ստիպում է այն կազմակերպություններին, որոնք համապատասխանում են այս չափանիշներին, գրանցվել որպես *«օտարերկրյա գործակալներ»* ԱՄՆ արդարադատության նախարարությունում: *«Օտարերկրյա գործակալները»* պարտավորվում են իրենց գործունեության, ֆինանսավորման մասին կիսամյակային հաշվետվություն ներկայացնել: Բացի այդ, տեղեկատվական բնույթի նյութերում պետք է նշված լինի, որ դրանք հրապարակվել և տարածվում են *«օտարերկրյա գործակալի»* գործառույթներ կատարող կազմակերպության կողմից: Այս պահանջները չիրականացնելու դեպքում սահմանվում է $10 հազ. տուգանք, որոշ դեպքերում մինչև 5 տարի ազատազրկում: Օրենքում նշվում է, որ որպես *«օտարերկրյա գործակալներ»* չեն սահմանվում այն թերթերն ու հրատարակչական գործակալությունները, որոնց առնվազն 80%-ի սեփականատեր է հանդիսանում ԱՄՆ քաղաքացին, և որոնց գործունեությունը չի տնօրինվում, վերահսկվում, ֆինանսավորվում օտարերկրյա ղեկավարների կողմից[3]:

Այս համատեքստում պետք է նշել, որ ԱՄՆ ուշադրության կենտրոնում են նաև այնպիսի միջազգային հեռուստաալիքներ, ինչպիսիք են *Russia Today*[4] և չինական *CCTV*[5] հեռուստաալիքները, որոնք վերջին տարիներին ուժեղացրել են իրենց ներկայությունը միջազգային մեդիա-շուկայում: Չնայած շատ քննարկումներին՝ *Russia Today*-ը չի մտնում այս ցուցակի մեջ: ԱՄՆ-ում որ-

[1] Как за рубежом регулируют владение СМИ иностранцами, http://www.kommersant.ru/doc/2573912
[2] Մանրամասն տե՛ս https://www.fara.gov/
[3] When Is a TV Channel a Foreign Agent? http://www.theatlantic.com/international/archive/2015/04/rt-lobbyist-russia-putin-media/390621/
[4] *RT*-ն եթեր է դուրս եկել 2005թ.՝ դառնալով շուրջօրյա ռուսական լրատվական հեռուստաալիք անգլերենով: Այսօր *RT*-ում են միավորվում 4 լրատվական հեռուստաալիքներ՝ արաբերենով, իսպաներենով, անգլերենով, ինչպես նաև *RT America*-ն ու *Free Video*-ն:
[5] Հեռուստաալիքը եթեր է հեռարձակվել 2009թ. սեպտեմբերի 10-ից, *Chinasat 6B* և *EB-9A* արբանյակներից: Հեռուստաալիքի ծածկույթը տարածվում է ԱՊՀ և Մերձբալթյան, Արևմտյան Եվրոպայի երկրներում: Պոտենցիալ հեռուստադիտողների թիվը հասնում է 300 միլիոնի:

պես օտարերկրյա գործակալի գործունեություն իրականացնող ԶԼՄ *FARA*-ում գրանցված է 4 լրատվական կազմակերպություն՝ ասիական երկու հեռուստացանցեր և չինական երկու պարբերական:

Երկրորդ խմբում ընդգրկված են այն երկրները, որոնցում պետությունը չի կարգավորում արտասահմանյան կապիտալի ներկայությունը ԶԼՄ-ում, ինչպես, օրինակ, Մեծ Բրիտանիան կամ Գերմանիան: Այս խմբում մենք դիտարկել ենք նաև այն երկրները, որոնցում վերահսկողությունը սահմանվում է ոչ թե ֆինանսավորումը սահմանափակող կոնկրետ օրենքներով, այլ «անուղղակիորեն»:

Իսրայելում չեն բացառում դրսից, հատկապես արաբական երկրների ծայրահեղական ուժերի կողմից հրապարակումներ պատվիրելու հնարավորությունը: Օտարերկրյա պատվիրատուների գործունեությունը կարգավորվում է Իսրայելում գործող բավական խիստ՝ *զրպարտության օրենքով և գրաքննությամբ:* Իսրայելում, բացի քաղաքական-ռազմական գրաքննությունից, գոյություն ունեն նաև կրոնական, աշխարհիկ, ինչպես նաև բարոյաէթիկական գրաքննության ձևեր[6]: Այն պետական բնույթ չի կրում, սակայն դրա հիմքում ընկած են լրագրողների էթիկայի նորմերը, որոնց հետևում են ազդեցիկ ինտերնետ պարբերականները, տպագիր մամուլը և հեռուստաընկերությունները:

Երրորդ խմբում առավել խիստ սահմանափակումներ ունեցող երկրներն են, ինչպես, օրինակ, Չինաստանը, որտեղ հատուկ վերահսկողություն են իրականացնում ԶԼՄ-ի նկատմամբ, մասնավորապես՝ արգելելով արտասահմանյան ներդրումները ԶԼՄ-ում: 2016թ. մարտի 10-ից Չինաստանում գործում է օտարերկրյա ԶԼՄ գործունեությանն ուղղված արգելքը, որի համաձայն՝ օտարերկրյա, ինչպես նաև համատեղ սեփականության սկզբունքով գործող բոլոր ինտերնետ-հրատարակչություններին չի թույլատրվում հրատարակել իրենց նյութերը համացանցի չինական սեգմենտում: Հոդվածներից զատ, արգելքի տակ են դրվում նկարները, խաղերը, մուլտիպլիկացիոն, աուդիո- և վիդեոֆայլերը, միևնույն ժամանակ՝ չինական ԶԼՄ-ին հրահանգվում է մանրամասն հետևել իրենց հրատարկած նյութերի բովանդակությանը:

Չինաստանում լրատվամիջոցները կարող են տնօրինել միայն Չինաստանի քաղաքացիները, խմբագրությունը և տեխնիկական անձնակազմը ևս պետք է Չինաստանի քաղաքացիներից կազմված լինի: Բոլոր սարքավորումները և սերվերները պետք է գտնվեն ՉԺՀ տարածքում: Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո լրատվամիջոցները վերագրանցվում են հատուկ վերահսկվող

[6] Մանրամասն տե՛ս http://chidag.ru/bezopasnost/obschestvo-smi-internet/cenzura-v-izraile.html

մարմիններում, որոնք հետագայում պետք է իրականացնեն ԶԼՄ գործունեության ամենամյա ստուգումներ: Հրատարակչությունները համացանցում նաև հրապարակում են նյութեր խիստ ինքնագրաքննության պայմաններում, իսկ լրացուցիչ վերահսկողության համար բոլոր նորությունները, հոդվածները և տեսանյութերը վերահսկվում են տեղական իշխանական մարմինների կողմից: 2015թ. հուլիսին ՉԺՀ-ում օրենք ընդունվեց նաև կիբեռանվտանգության մասին: Անհատական տվյալների ապահովության պատրվակով տեղական իշխանությունները ծրագրում են վերահսկողություն հաստատել ոչ միայն ինտերնետ պրովայդերների, այլև հայտնի օնլայն-հարթակների սեփականատերերի և ադմինիստրատորների նկատմամբ: Նման վերահսկողություններն օտարերկրյա ԶԼՄ գործունեության նկատմամբ պետության կողմից իրականացվող հստակ ռազմավարություն է, որն ուղղված է չեզոքացնելու արևմտյան մշակույթի ազդեցությունը Չինաստանի տարածքում:

Ռուսաստանում 2012թ. հունիսի 29-ին *«օտարերկրյա գործակալների»* մասին օրենքի նախագիծը ներկայացվեց Ռուսաստանի Պետդուման, իսկ հուլիսի 6-ին այն գրեթե միաձայն անցավ և նոյեմբերից արդեն գործնական կիրառական ուժ ստացավ: Օրենքը վկայում է այն մասին, որ արտերկրից ֆինանսավորում ստացող՝ քաղաքական գործունեություն ծավալող կազմակերպությունները պետք է գրանցվեն որպես *«օտարերկրյա գործակալներ»*[7]:

2016թ. հունվարի 1-ին վերոնշյալ օրենքն արդեն սկսեց տարածվել նաև ԶԼՄ-ի վրա: Դրանք եռամյակը մեկ պարտավորվում են տեղյակ պահել իրենց արտասահմանյան ֆինանսավորման մասին *Роскомнадзор*-ին: Տեղյակ չպահելու դեպքում տվյալ լրատվամիջոցը կտուգանվի 30.000-50.000 ռուբլի (մոտ 500-800 դոլար): Մեկ տարվա ընթացքում երեք անգամ օրենքը խախտելու դեպքում նրանց գործունեությունը կկասեցվի: Վերոնշյալ օրենքը չի տարածվում գովազդի թողարկման համար տրվող ֆինանսավորման վրա, եթե այն չի գերազանցում 15.000 ռուբլին (մոտ 250 դոլար):

2017 թվականից Ռուսաստանում օրենքը կարգելի արտասահմանցիներին կամ երկքաղաքացիություն ունեցող ՌԴ քաղաքացիներին դառնալ լրատվական կառույցների հիմնադիր[8], իսկ օտարերկրյա կազմակերպությունների կապիտալը չպետք է գերազանցի 50%-ը: Նշենք, որ 2008-ից այս սահմանա-

[7] ՌԴ արդարադատության նախարարության պաշտոնական կայքի տվյալների համաձայն՝ այս պահի դրությամբ այնտեղ գործում է 123 «օտարերկրյա գործակալ»:
[8] Список российских СМИ, получающих иностранное финансирование, http://topwar.ru/94519-spisok-rossiyskih-smi-poluchayuschih-inostrannoe-finansirovanie.html

փակումները տարածվում են միլիոնից ավելի տպաքանակ ունեցող թերթերի և ամսագրերի վրա: Նման ներդրումներ անելիս օտարերկրացիները պետք է համաձայնության գան տեղի պետական հանձնաժողովի հետ:

ԶԼՄ-ի հետ կապված օրենքի նոր փոփոխությունները սահմանափակում են օտարերկրացիներին ուղղակիորեն կամ անուղղակիորեն տնօրինել ցանկացած ռուսական ԶԼՄ բաժնետոմսերի 20%-ից ավելիին: Այս օրենքը տարածվում է այն ֆիզիկական անձանց (այդ թվում նաև երկքաղաքացիություն ունցող ՌԴ քաղաքացիների), կազմակերպությունների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների, ինչպես նաև ռուսական իրավաբանական անձանց վրա, որոնց գործունեությունը 1/5-րդ մասով վերահսկվում է օտարերկրյա կազմակերպությունների կողմից: Օրինագծի հեղինակները գտնում են, որ Ռուսաստանի դեմ տեղեկատվական պատերազմ է մղվում, և ռուսական ԶԼՄ-ն անհրաժեշտ է պաշտպանել օտարերկրյա կապիտալի ազդեցությունից[9]: Օրենքը գործում է 2016-ից, սակայն մինչև 2017թ. մեդիա-ընկերությունները պետք է իրենց հիմնադիրների և ղեկավարների ցանկից հանեն այն կազմակերպություններին և անհատներին, որոնց վրա տարածվում է օրենքը, այլապես օրենքը խախտողները կզրկվեն կորպորատիվ, ղեկավարման և քվեարկելու իրավունքից[10]: Օրենքում որոշակի փոփոխություններ իրականացնելու վերաբերյալ հեղինակները քննարկումներ են ծավալում, մասնավորապես՝ այն կետերի շուրջ, որ ռուսական ԶԼՄ 49%-ը տնօրինեն օտարերկրյա ղեկավարները, 51%-ը՝ ռուս, ինչպես նաև օրենքը տարածեն միայն հասարակական-քաղաքական ուղղվածություն ունեցող տպագիր մամուլի վրա՝ չտարածելով ժամանցային թերթերի վրա: Սակայն այս կետերը դեռ քննարկման մակարդակում են:

Ամփոփելով նշենք, որ ԶԼՄ-ն ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտ է երկրի տեղեկատվական քաղաքականության ձևավորման հարցում: Այդ պատճառով էլ ԶԼՄ գործունեության, ֆինանսավորման, մեդիայի բովանդակությունը կարգավորող նորմերը գտնվում են պետության ուշադրության կենտրոնում, արտացոլված են բազմաթիվ օրենքներում: Այս հոդվածի շրջանակներում մենք անդրադարձանք ԶԼՄ գոյության նախապայման հանդիսա-

[9] Վերջին շրջանում աղմուկ բարձրացավ *«Дождь»* և *«РБК»* հեռուստաալիքների հետ կապված, որոնք մեղադրվում են արևմտյան ֆինանսավորում ստանալու մեջ:
[10] Как устроен закон об иностранцах в СМИ?,
https://meduza.io/cards/kak-ustroen-zakon-pro-inostrantsev-v-smi

ցող ֆինանսավորման խնդիրներին, մասնավորապես՝ մեդիա-տիրույթում արտասահմանյան կապիտալի առկայությանն առնչվող օրենքներին: Այդ օրենքների գործնական կիրառությունը միանշանակ չէ, կարող է հանգեցնել բազմաթիվ խնդիրների: Այսպես, օտարերկրյա ֆինանսավորման սահմանափակող օրենքներն ուղղված են ոչ միայն արտաքին ազդեցությունից, արտաքին տեղեկատվական հոսքերից սեփական տեղեկատվական դաշտը պաշտպանելուն, այլ նաև ներքին դաշտը վերահսկելուն, կարող են օգտագործվել որպես կոնկրետ լրատվամիջոցի վրա ճնշում գործադրելու լծակ, որը արդյունքում կարող է հանգեցնել գործունեության կասեցմանը:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԲԱՑ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սամվել Մարտիրոսյան[*]

Հայաստանի Հանրապետության պետական համակարգի կուտակած և կուտակվող տվյալները, որոնք հրապարակվում և մատչելի են դառնում հանրության համար, այսօր արդեն բավական մեծ զանգված են կազմում: Պետական բաց տվյալները (*Open Data*) այսօր հասանելի են ինչպես հասարակ քաղաքացիներին, այնպես էլ լրագրողներին և կազմակերպություններին, որոնք զբաղվում են տվյալների մշակմամբ և վերլուծությամբ:

Բաց տվյալների հրապարակումը ոչ միայն թույլ է տալիս ստեղծել գործիքներ կառավարության ավելի թափանցիկ աշխատանքի, կոռուպցիայի դեմ պայքարի, այլ նաև ոլորտային թիրախային բարեփոխումների համար: Արդեն կան մի քանի ցայտուն օրինակներ, երբ բաց տվյալների օգտագործումն ունեցել է ոլորտային դրական ազդեցություն:

Տվյալների մի շարք շտեմարաններ լրագրողական հակակոռուպցիոն և քաղաքացիական հետաքննությունների մեծ ներուժ ունեն, օրինակ՝ «Մեկ անձից կատարվող գնումներ»[1], «ՊՈԱԿ-ների ֆինանսավորում»[2], «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց հայտարարագրեր»[3]: Սրանք օրինակներ են, երբ տվյալների շտեմարանները հետազոտողին թույլ են տալիս որոնողական ինքնուրույն աշխատանք կատարել:

Սակայն կարևոր է նաև, որպեսզի հնարավոր լինի տվյալներն ավտոմատացված կերպով մշակման ենթարկվեն, ինչպես նաև վիզուալ կերպով ներկայացվեն: Օրինակ, Շվեդիայի կառավարությունը հատուկ *API* է տրամադրում[4] վիճակագրական տվյալներն ավտոմատացված եղանակով ստանալու և

---

[*] «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական կենտրոնի փորձագետ:

[1] Մեկ անձից կատարվող գնումներ, https://www.e-gov.am/transparent/

[2] ՊՈԱԿ-ների ֆինանսավորում, https://www.e-gov.am/poak/

[3] Բարձրաստիճան պաշտոնատար անձանց հայտարարագրեր, http://www.ethics.am/hy/

[4] *API for the Statistical Database,* http://www.scb.se/en_/About-us/Open-data-API/API-for-the-Statistical-Database-/

մշակելու համար: Իսկ ամերիկյան կառավարությունը՝ առանձին մեծ գործիք[5], որի միջոցով հնարավոր է բաց տվյալների վիզուալացումը, ինքնուրույն մշակումը և վերլուծումը հասարակ քաղաքացու կողմից, որը հատուկ գիտելիքներ չունի տվյալների մշակման ոլորտում:

Հայաստանի դեպքում գոյություն ունի տվյալների վիզուալացման մեկ հանրայնորեն հայտնի գործիք. դա ինտերակտիվ բյուջեն է[6], որն օգտվողին ձևափոխումների մեծ հնարավորություններ չի տալիս: Նման գործիք ունի նաև Երևանի քաղաքապետարանը[7]:

Ինչ վերաբերում է տվյալների մշակման հնարավորություններին, ապա այս հարցում Հայաստանը մեծ հաջողությունների դեռ չի հասել: Նման գործիքներ կան, բայց շատ քիչ են և արդիականացված չեն: Ազգային վիճակագրական ծառայությունը տվյալների շտեմարաններ է տրամադրում բավական մինիմալիստական գործիքներով[8]: Բացի այդ՝ վիճակագրական տվյալները մշակելու համար գոյություն ունի ևս երկու հարթակ՝ *Armstatbank*[9] և *Armdevinfo*[10]: Երկուսն էլ բավական բարդ և անհարմար են աշխատելու համար, արդիական չեն և ծանր են աշխատում:

Մյուս կողմից՝ կան մասնավոր դեպքեր, երբ պետական տվյալներն ավտոմատացված մշակումից հետո տրամադրվում են շատ ավելի մատչելի տեսքով: Կարելի է համեմատել պաշտոնական հարկային տվյալների շտեմարանները[11] և դրանց մշակման համար *SFL LLC* մասնավոր կազմակերպության ստեղծած «Հարկատու» հարթակը[12]: Տվյալ գործիքն ակտիվորեն օգտագործվում է ինչպես լրագրողների, այնպես էլ քաղաքացիների կողմից:

Գոյություն ունի շատ ավելի մեծ ազդեցություն ունեցած դեպք՝ կապված արտարժույթի փոխանակման հետ: *Rate.am* կայքը, որը կրկին ստեղծվել է *SFL LLC* կազմակերպության կողմից, մի տեղ հավաքելով բոլոր բանկերի կողմից հայտարարվող արտարժույթի փոխարժեքները, ազդեցություն ունեցավ ողջ

[5] *DATA USA*, http://datausa.io/
[6] Ինտերակտիվ բյուջե, https://www.e-gov.am/interactive-budget/
[7] Երևանի ինտերակտիվ բյուջե, http://budget.yerevan.am/
[8] Վիճակագրական տվյալների բազաներ, http://armstat.am/am/?nid=246
[9] http://armstatbank.am/
[10] http://www.armdevinfo.am/
[11] ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՑԱՆԿԵՐ, http://taxservice.am/Content.aspx?itn=TILists
[12] http://harkatu.am/

շուկայի վրա՝ փոխարժեքները երկրով մեկ մոտավորապես նույն մակարդակի բերելով բանկերում և փոխանակման կետերում:

Բաց տվյալների կիրառման դրական դեպքերը ցույց են տալիս, որ այս ոլորտը կարող է թույլ տալ բարելավել բազմաթիվ ոլորտներ Հայաստանում: Սակայն բաց տվյալների դեպքում կարևոր են միանգամից մի քանի բաղադրիչներ, որոնց ապահովման դեպքում է հնարավոր լինում դրանք պատշաճ կերպով ստանալ, մշակել, վերլուծել: Տվյալները պետք է լինեն.

- հասանելի,
- լիարժեք,
- հասանելի արխիվներով,
- միևնույն ձևաչափով,
- մշակելու համար պատրաստ ձևաչափով:

Հայաստանի դեպքում արխիվների հասանելիության հետ կապված խնդիրներ են առաջանում: Կայքերի թարմացումից, վերազինումից հետո պատահում են դեպքեր, երբ արխիվներն անհետանում են: Հաճախ դա լինում է կառավարության փոխվելու հետ կապված:

Տվյալների տրամադրման միատարրության վերաբերյալ գոյություն ունի կառավարության՝ «Ինտերնետ ցանցում պետական մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող նվազագույն պահանջները հաստատելու մասին» որոշումը[13]: Ըստ այդ որոշման՝ կայքերը պետք է համապատասխանեն ընդհանուր նորմերին: Սակայն իրականությունն այն է, որ համացանցի պետական հատվածը չափից ավելի բազմազան է, խճճված և որոշ հատվածներում ունի ոչ տրամաբանական, դժվար ընկալվող կառուցվածք: Բացի այդ, հատուկ շեշտ չի դրվում տրամադրված տվյալների կոնկրետ ձևի, ձևաչափի վրա:

Բաց տվյալների (*Open Data*) առկա շտեմարանները Հայաստանում, մի կողմից, բավական շատ տեղեկատվություն են տրամադրում, մյուս կողմից՝ տեղեկատվությունը տրամադրվում է առանց կոնկրետ ձևաչափի, հստակ ձևի: Կայքից կայք փոխվում է տրամադրման ձևը: Մի տեղում պարզապես *html* տարբերակ է, մեկ այլ տեղում՝ *pdf, doc, xls*:

[13] ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, Ո Ր Ո Շ ՈՒ Մ, 26 դեկտեմբերի 2013 թվականի, N 1521-Ն ԻՆՏԵՐՆԵՏ ՑԱՆՑՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=88785

Կան նաև շտեմարաններ, որոնք տվյալները տրամադրում են միայն փնտրելու միջոցով: Չկա ընդհանուր մոտեցում, թե ինչպես, ինչ ձևաչափով կարելի է հրապարակել տեղեկությունը: Օրենսդրության պահանջը, փաստորեն, կատարվում է, հրապարակումն իրականացվում է, սակայն տվյալների հետ աշխատանքը բարդանում է: Բաց տվյալների շտեմարանների մատուցման ձևերի խիստ բազմազանությունը, դրանց ապակենտրոնացված լինելն այսօր խոչընդոտ է տվյալների վերլուծության, մշակման համար, ինչն էլ դժվարացնում է կիրառական մոտեցումները:

Բարդանում է աշխատանքը ոչ միայն կոնկրետ ուսումնասիրության համար: Շատ դեպքերում գրեթե անհնար է դառնում տեղեկատվության ավտոմատացված մշակումը:

Պետական գերատեսչությունից տրամադրվող տեղեկատվությունը երրորդ կողմի վերամշակման դեպքում կարող է դառնալ հասարակական կյանքը բարելավող բազմաթիվ ծրագրերի հիմք, օրինակ՝ կրթական համակարգի, տրանսպորտի, բնապահպանության, գյուղատնտեսության և այլ ոլորտների՝ համակարգված և ավտոմատացված կերպով մշակված տեղեկատվությունը: Բայց նման լուծումներ ստանալու համար տեղեկատվությունը պետք է.

- լինի միշտ թարմ, վերանայված, ճշգրիտ,
- ունենա մեքենաների համար ընթերցվող ձևաչափ, օրինակ՝ *XML, CSV* և այլն,
- տրամադրվի մի քանի ձևաչափով:

Տեղեկատվության հետ աշխատելու համար այսօր կարևոր է դառնում հատուկ *API*-ն, ինչն այսօր Հայաստանում դեռ անտեսվում է. չկա ոչ հասարակական պահանջ, ոչ պետական մոտեցում նման տիպի գործընթացների տեղադրման համար:

Պետական տեղեկատվական շտեմարանները սփռված են գրեթե բոլոր կայքերով մեկ: Սակայն գոյություն ունեն կլաստերներ, որոնցում տեղեկատվական բազաները կապակցված են:

Գոյություն ունեն երկու մեծ կլաստերներ՝ մարզպետարաններ և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններ:

Բացի այդ, գոյություն ունեն մի շարք մեծ տվյալների շտեմարանների կլաստերներ (տե՛ս Նկարներ 1-6, մուգ կապույտով ներկայացված են ոչ պետական կայքերը).

Նկար 1

Կառավարությանը և էլեկտրոնային կառավարությանը վերաբերող տվյալների շտեմարաններ



Նկար 2

Օրենսդրական և իրավաբանական տվյալների շտեմարաններ



Նկար 3

Ֆինանսական տվյալների շտեմարաններ



Նկար 4

Կրթական ոլորտի տվյալների շտեմարաններ



Նկար 5

Տնտեսական տվյալների շտեմարաններ



Նկար 6

Բանկային տվյալների շտեմարաններ



ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՀԱՅ ԲՆԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ[1]

Էդուարդ Լ. Դանիելյան[*]

Հնագույն ժամանակներից բնության երևույթները և տարրերն անսպառ աղբյուր են եղել բնապաշտության համար, որի հիմքի վրա ձևավորվող կրոնական և հավատքային ընկալումներով էր պայմանավորված աստվածաբանական պատկերացումների առաջացումը: Դրախտի և Հավիտենական Ուխտի խորհրդապաշտությամբ Արարատի լեռներում, ըստ Աստվածաշնչի Վուլգատա տարբերակի՝ Արմենիա-Հայաստանում է վկայվել միաստվածային աստվածապաշտությունը:

Ժամանակի ընթացքում բնության տարրերի հոգևոր ընկալմամբ միաստվածային ընկալումից տարանջատվում էր բազմաստվածայինը: Մինչդեռ հոգևոր ընկալումների գերագույն ասպարեզը մնում էր երկինքը, որի մ.թ.ա. VIII-III հազարամյակներից Հայկական լեռնաշխարհում դիտարկման վկայություններն են Արարատի, Արագածի, Ուխտասարի լեռնալանջերին, Գեղամա և Վարդենիսի, Արցախի, Նախիջևանի, Գողթնի, Վանանդի, Վասպուրականի, Հայկական Տավրոսի, Կորդուքի լեռներում գտնվող ժայռապատկերները և մ.թ.ա. VI-III հազարամյակների քարե աստղադիտարանները՝ Զորաց կամ Դիք-դիք քարեր (Քարահունջ) և Մեծամոր: Հատկանշական է, որ երկինքը որպես հոգևոր ներշնչանքի ոլորտ Հայաստանի առումով ներկայացված է Արարատի լեռներում Աստծո հաստատած առաջին՝ Հավիտենական Ուխտի և որպես դրա վկայություն ծիածանի, ինչպես նաև Հայկի համաստեղության մասին՝ «…աստեղք երկնից՝ Հայկիւն հանդերձ եւ ամենայն զարդուն երկնից…» [1, Եսայի, ԺԳ, 10; 2, էջ 105] աստվածաշնչյան տեղեկություններում:

Հայոց հոգևոր ավելի քան յոթհազարամյա պատկերացումների հիմքում են նախնիների պաշտամունքը և Բարու հաղթանակը չարի նկատմամբ: Հա-

[1] Զեկուցում՝ կարդացված ԱՐՇԱԼՈՒՅՍ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՑ Միջազգային գիտաժողովում, Երևան, 2016:

[*] Պ.գ.դ.:

վատքի ծագումնաբանական արմատներին բնորոշ չէր բարին չարի զուգակից համարելը, «երկակիությունը» [3; 4; 5; 6, pp. 19, 31, 122], այսինքն՝ Բարսեղ Կեսարացու բնութագրմամբ՝ «երկարմատականությունը» [7, էջ 29-31; 8, c. 269]: «Երկակիությունը», ինչպես դիպուկ դիտարկել է ակադեմիկոս Գագիկ Սարգսյանը, բացակայում էր հայոց հեթանոսության մեջ, որով հայկական հեթանոսական կրոնը սկզբունքայնորեն տարբերվում էր իրանական զրադաշտականությունից [9, c. 269]: Հայկը, Արամը, Տիգրանը, ինչպես նաև հայկական էպոսի հերոսները մերժում և կործանում են արտաքինից եկող՝ չարը մարմնավորող և կռապաշտություն սերմանող ուժերին: Հայկյան սերունդները հավատարիմ են հայրենի հավատքի վկայության արմատներից եկող ազգային արժեքներին:

Պատմականորեն այդ բացատրվում է Հայկական լեռնաշխարհում՝ Լուսապաշտության և քաղաքակրթության բնօրրանում, Հայ ազգի բնիկությամբ և էթնիկական միատարրությամբ:

Հազարամյակներ անց Լույսի պաշտամունքի վկայության շարունակականությունն իր դրսևորումը գտավ բնօրրանում՝ Հայաստանում, որտեղ I դարում քրիստոնեական հավատքն Առաքելական քարոզությամբ ընձյուղվում էր ճշմարիտ աստվածպաշտության ակունքներին, որով հաստատվեց Հայ Առաքելական եկեղեցին: Իսկ նույն դարում, հակառակ աստվածաշնչյան ճշմարտության, Փիլոն Եբրայեցին գրել է. «Ասին Դկղաթայ եւ Արածանւոյ աղբիւրքն բղխել ի Հայոց լերանցն. Եւ անդ դրախտ ոչ է, այլ եւ ոչ երկուք եւ այլ աղբիւրք գետոյն» [10, էջ 9]: Այն, որ Փիլոնը ձգտել է մերժել Հայոց լեռներից դրախտի գետերի բխումը, ապացուցում է հակառակը՝ հնում քաջ հայտնի էր Հայոց լեռների սրբազան նշանակությունը: Եվ հենց պատասխանը V դարում տվել է Վարդանանց պատմիչ Եղիշեն. «Երկու գետով (Եփրատ և Տիգրիս-Է.Դ.) և տապանաւն գեր ի վերոյ եմք քան զյոլովս» [11, էջ 245]:

Երկու դար անց Անանիա Շիրակացու մշակած բնափիլիսոփայական հայացքների լույսի ներքո որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նախաքրիստոնեական ու վաղքրիստոնեական դարաշրջանների գիտական զարգացումների շրջանակներում կրոնական պատկերացումների դրսևորումների նկատմամբ նրա կիրառած մեթոդաբանությունը: Անտիկ գիտության և Ոսկեդարյան մեծ մտածողների՝ Մովսես Խորենացու, Եզնիկ Կողբացու, Եղիշեի ու Դավիթ Անհաղթի գիտական ժառանգությանը ստեղծագործաբար մոտենալով՝ Անանիա Շիրակացին VII դարի երկրորդ կեսին նոր գիտա-

կան արժեքներ ստեղծեց՝ իր գիտակրթական գործունեությունը շարունակելով Հայաստանի անկախության և տարածքային ամբողջականության վերականգնման ժամանակաշրջանում:

Աստծո գերագույն էության հիմնական հատկանիշների մշտնջենավորության և անսահմանության բնափիլիսոփայական ընկալումն արտացոլվել է հայ վաղմիջնադարյան մատենագրության մեջ: Եզնիկ Կողբացին աստվածաբանական-իմաստասիրական մոտեցումով է հիմնավորել միաստվածության գաղափարը: Դավիթ Անհաղթը աստվածճանաչողության ածանցյալ է դիտել իմաստասիրությունը՝ մասնավորապես նշելով. «Շնորհեաց Աստուած զիմաստասիրութիւն վասն զարդարելոյ զմարդկային հոգի» [12, էջ 158], այսինքն՝ այն մաքրում է կրքերից և հնարաւորություն տալիս աստվածաբանել:

Շիրակացին բնափիլիսոփայական խնդիրները հետազոտելիս գաղափարական առումով նախաքրիստոնեական ժամանակների փիլիսոփաների մի մասին անվանել է «բարի», իսկ մյուսին՝ «չար իմաստասերներ» [13, էջ 34]: Ինչ վերաբերում է Հայ եկեղեցու ներկայացուցիչներին, ապա նրանց Շիրակացին անվանել է «մեր սուրբ հայրեր և վարդապետներ»: Նախաքրիստոնեական դարաշրջանի ուսմունքների և դրանց կրողների հիշատակման առիթով Շիրակացին կիրառել է «արտաքին» կամ «հեթանոսական» տերմինները: «Հեթանոս» բառի հիմքում է հունարեն «էթնոս»՝ «ցեղ, ազգ» բառը և հին հայոց հավատքի ու քրիստոնեության սկզբնական շրջանի առումով նշանակել է «ցեղ, ազգ», իսկ միջնադարում՝ «ոչ քրիստոնյա, այլակրոն» [14, էջ 80; 15, էջ 74]: Այսինքն՝ հեթանոս բառին պատմական տարբեր դարաշրջաններում տարբեր իմաստ է տրվել: Այսպիսով, հին հայոց հավատքի և վաղ քրիստոնեական դարաշրջանի առումով «հեթանոսական» բառը նշանակել է *ցեղային*, *ազգային:* Այս հանգամանքը պետք է նկատի ունենալ, երբ Աստվածաշնչի, Մովսես Խորենացու, Եղիշեի և մյուս պատմիչների ու հայրախոսական երկերի միջոցով անդրադարձ է կատարվում հազարամյակների խորքից եկող հայոց հոգևոր պատմության ակունքներին:

Շիրակացու աստվածաբանական հայացքները կենտրոնանում են արարչագործության արգասիք՝ բնության ու բնական երևույթների ճանաչողության շուրջ: Նա միաստվածության գաղափարով կամրջել է հին և վաղմիջնադարյան գիտական մոտեցումները, գրելով՝ *արտաքին բարի փիլիսոփաները* «զմի աստուածութիւնն խոստովանեցին՝ անեղ և ամենակատար, պատ-

ճառ ամենայն եղելոց՝ երեւելեաց և իմանալեաց» [13, էջ 34]: Աստծուն՝ տարրերի շարժման պատճառ դիտելու դրույթի առիթով Անանիա Շիրակացին հիշատակել է Արիստոտելին:

Արիստոտելն իր փիլիսոփայական հայացքներում այն եզրակացությանն էր եկել, որ Տիեզերքը տարածության առումով սահմանափակ է, իսկ «վերին երկնքի» շարժման աղբյուրը՝ «նախաշարժիչն է» [16, с. 578, прим. 10]:

Շիրակացին ճշմարիտ է համարում «տեսական ուսումնասիրությամբ» զբաղվողների համար նախնիների բանիմաց խոսքերին հետևելը: Աստվածաբանության մեջ գիտական ճանաչողության կարևորության մասին գրելիս Շիրակացին բանականի առումով նշել է, որ անհրաժեշտ է սկսել ճանաչողությունը նրանից, ինչը սկիզբ ունի, քանզի այն, ինչը սկիզբ ունի, առաջանում է ինչ-որ սկիզբ չունեցողից, և հենց այդ անսկիզբը անբացատրելի և բանականության համար անհասանելի է, սակայն ճանաչվում է իմանալիի միջոցով: Իսկ այն, ինչ ճանաչվում է, իմանալի է դառնում բանականության միջոցով [13, էջ 34]: Շիրակացու իմացաբանական այս դրույթն, աստվածաբանական հենքով հանդերձ, ակնհայտորեն կապվում է փիլիսոփայական մտքի հետագա մշակումների հետ: Մասնավորապես, Կանտն իր անդրանցական փիլիսոփայության մեջ բանականությամբ իմանալի երևույթների ճանաչողությունը բնութագրել է «ինքնին իրը» (Das Ding in sich) տերմինով:

Միաստվածության ընկալումների հանգուցալուծումով Շիրակացին դիտարկում է Աստծո մասին նախաքրիստոնեական և քրիստոնեական դարաշրջանների պատկերացումների շարունակականությունը՝ գաղափարական հիմք ստեղծելով բնափիլիսոփայական և ձևավորվող բնագիտական հայեցակարգերը ճանաչողական հունով ուղղորդելու նպատակով: Այս ուղղությամբ դիտարկելով միաստվածության գաղափարը՝ Շիրակացին գրում է. «Միաստվածությունը խոստովանող բարի փիլիսոփաները ասացին, որ նրա էությունը ոչ մտքով, ոչ էլ խոսքով է ընկալվում, և հենց ինքն է սկիզբը և Արարիչն այն ամենի, ինչ երևում է և ճանաչվում»: Այստեղից, ըստ Շիրակացու, սկսվում է բնության ճանաչողությունը, քանզի նրանից սկիզբ առած տարրերը թվով չորսն են. առաջինը՝ հուր, երկրորդը՝ հողմ, երրորդը՝ հող, չորրորդը՝ ջուր [13, էջ 34]:

Երկրի ձևին վերաբերող հարցում Շիրակացին բերում է «արտաքին բարի փիլիսոփաների» երկու տեսակետները: Մեկի համաձայն՝ այն ուներ սկու-

տեղի ձև, իսկ, ըստ մյուսի՝ գնդի: Շիրակացին փաստարկներ է բերել՝ ապացուցելով այդ վերջինիս ճշմարիտ լինելը: Նա համաձայնել է *բարի փիլիսոփաների* հետ, ովքեր ասել են, թե ծովը երկրի վրա է և դրա մեջտեղում և այլն:

Գնահատելով աստղաբաշխությամբ զբաղվող քաղդեացիներին, եգիպտացիներին և նրանցից ընդօրինակած հույներին՝ Շիրակացին գրել է, որ քաղդեացիները հմուտ էին աստղաբաշխության մեջ և ջանում էին երկնքի մասին ավելի խոր գիտելիքներ ձեռք բերել, սակայն չկարողացան երկնային զարդերի դիտարկումներից ավելի վեր բարձրանալ՝ հասնել դրանց արարչության ճանաչողությանը, ուստի սկսեցին լուսատուները և համաստեղությունները աստվածներ համարել: Այդ կարգով նրանք դրանց վերագրեցին հատկություններ, որոնք իբրև թե ազդում են մարդկանց ճակատագրերի վրա: Եզնիկ Կողբացին [17, էջ 154, 156] և Անանիա Շիրակացին քննադատել են քաղդեական աստղագուշակությունը՝ միևնույն ժամանակ տեղեկություններ հաղորդելով Կենդանակերպի, մոլորակների և այլ աստղերի, ինչպես նաև խավարումների մասին: Ինչ վերաբերում է սնոտիապաշտությանը սնուցող աստղագուշակության քննադատությանը՝ Շիրակացին շեշտում է. «Ես պիտի կշտամբեմ քաղդեացի աստղաբաշխների ցնդաբանությունը, որին շատերը հավատում են» [18, էջ 84]: Շիրակացին, աստղագուշակությունը և կախարդություններն անհեթեթություն համարելով, եզրակացրել է, որ դրանք աստվածներ չեն՝ ո՛չ մեծ ու փոքր լուսատուները, ո՛չ նույն ինքը՝ երկինքը և ո՛չ էլ երկիրը, քանզի մոլորությամբ դեգերում են և անհրաժեշտության դեպքում շարժման մեջ դրվում մի հզորագույնի կողմից: Այստեղից պարզ է, որ մեկ ուրիշն է նրանց Արարիչը, որը կարող է այս ամենը շարժել, և նա է Աստված [19, էջ 7-8]: Շիրակացին ցույց տվել, որ աստղային երկնքի ուսումնասիրությունից ստացված տվյալների կիրառման կարևորագույն բնագավառներն են ճանապարհորդությունները և եղանակի կանխագուշակությունը:

Այսպիսով, հնուց եկող միաստվածության գաղափարը, ուրույն կերպով արտացոլվելով անտիկ փիլիսոփայությունում, վաղ միջնադարում հայ բնափիլիսոփայական միտքը, քրիստոնեական ըմբռնմամբ իմաստավորեց արարչակերտ բնության ճանաչման համատեքստում: Ելնելով միաստվածության գաղափարից և ղեկավարվելով գիտական մտքի շարունակականության պահպանման սկզբունքով՝ Անանիա Շիրակացին ամուր հիմքերի վրա է կառուցել իր բնափիլիսոփայական համակարգը:

Աղբյուրներ և գրականություն

1. Գիրք Աստուածաշունչք Հին եւ Նոր Կտակարանաց, Վենետիկ, 1860:
2. *Է.Լ. Դանիելյան,* Հին հայոց դիցաբանական պատկերացումները աստղային երկնքի մասին, ՊԲՀ, 1989, N 3:
3. *Donini A.,* Storia del Christianesimo, Milano, 1977.
4. *Dumézil G.,* Les dieux souverains des Indo-Européen. Paris, 1977.
5. *Dumézil G.,* L' idéologie tripartite des Indo-Européens, 1958.
6. *Frye R.N.,* The Heritage of Persia. Cleveland and New York, 1963.
7. Սրբոյ Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապադովկիացւոյ Ճառք վասն վեցօրեայ արարչութեանն, ի Վենետիկ, 1830:
8. Предстательство за христиан Афиногора Афинянина, христианского философа. Перев.с древнегреческого и коммент. А. В. Муравьева. ВДИ, N 3, 1993.
9. *Мовсес Хоренаци,* История Армении. Перевод с древнеармянского языка, введение и примечания Гагика Саркисяна, Ереван,1990.
10. Փիլոնի Եբրայեցւոյ Մնացորդք ի Հայս. որ են մեկնութիւն Ծննդոց եւ Ելից, Վենետիկ, 1826:
11. *Լևոն Խաչիկյան,* Եղիշեի «Արարածոց մեկնութիւնը», Երևան, 1992:
12. *Դաւիթ Անյաղթ,* Սահմանք իմաստասիրութեան: Համահաւաք քննական բնագիր, ծան. Ս.Արեւշատեանի, Երեւան, 1960:
13. Անանիայի Շիրակունւոյ Մնացորդք բանից, ի լոյս ած Ք. Պատկանեան, Ս. Պետերբուրգ, 1877:
14. Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1837:
15. *Հ.Աճառյան,* Հայոց լեզվի արմատական բառարան, հ. Գ, Երևան, 1926:
16. *Аристотель,* Соч.,ред., автор вступ. статьи и прим. И. Д. Рожанский, М., 1981.
17. Եզնկայ Կողբացւոյ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:
18. Անանիա Շիրակացի, Մատենագրություն: Թարգմ., առաջաբանը և ծան., Ա.Գ.. Աբրահամյանի և Գ.Բ. Պետրոսյանի, Երևան, 1979:
19. *Է.Լ.Դանիելյան,* Քաղդեական աստղագուշակության քննադատությունը Անանիա Շիրակացու կողմից, 4-րդ Անդրկովկասյան կոնֆերանսի (գիտության պատմություն) աշխատություններ, Երևան, 1972:

ՍՓՅՈՒՌՔԻ ՎՏԱՆԳՎԱԾՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԸ

Վահրամ Հովյան*

Մեթոդաբանական հարցեր

Սփյուռքի վերաբերյալ քննարկումներում մեծ տեղ է տրվում նրա անվտանգության մարտահրավերներին: Որպեսզի «մարտահրավեր», «անվտանգություն» և նման այլ արտահայտությունները վերացական չլինեն, անհրաժեշտ է դրանց դիտարկումն իրականացնել քանակական չափումների միջոցով: Այդ նպատակով առաջ են քաշվել «վտանգվածության ինդեքս (ցուցիչ)» և «վտանգվածության աստիճան» հասկացությունները:

Վտանգվածության ինդեքսը չափվում է մաթեմատիկական բանաձևի միջոցով, որի հիմքում որպես փոփոխականներ ընկած են վտանգվածության չափորոշիչները: Դրանք հինգն են: Նախ՝ որպես այդպիսիք դիտվում են ժամանակին մեր կողմից առանձնացված չորս մարտահրավերները՝ գոյապահպանության խնդիրները, արտագաղթը համայնքներից, ինքնության բաղադրիչների կորուստը և խառնամուսնությունները, որոնք ներկայում ծառացած են Սփյուռքի առջև[1]: Քանի որ ընդհանրապես հայ հանրության և, մասնավորապես, Սփյուռքի անվտանգության համար կարևոր նշանակություն ունի նրա մտավոր ներուժը, հիշյալ չորս չափորոշիչներին ավելանում է նաև վերջինս՝ որպես ևս մեկ չափորոշիչ:

Ըստ այս չափորոշիչներից յուրաքանչյուրի՝ Սփյուռքի վտանգվածությունը կարող է ունենալ չորս աստիճան՝ զրոյական, ցածր, միջին և բարձր: Վտանգվածության յուրաքանչյուր աստիճան արտահայտվում է թվային միավորի տեսքով. զրոյականը՝ 0, ցածրը՝ 1, միջինը՝ 2 և բարձրը՝ 3: Հարկ է նշել, որ ըստ մտավոր ներուժի՝ Սփյուռքի վտանգվածության աստիճանի որոշումը տարբերվում է մյուս չափորոշիչներով այդ հարցի որոշումից: Ի տարբերու-

* «Նորավանք» ԳԿՀ Հայագիտական կենտրոնի ավագ փորձագետ, Գիտական-փորձագիտական խորհրդի քարտուղար:

[1] *Հովյան Վ.,* Հայկական սփյուռքի անվտանգության մարտահրավերները, «Գլոբուս», թիվ 5, 2014, էջ 39-42:

թյուն մյուս չափորոշիչների, որոնց դեպքում որքան մեծ է մարտահրավերը, այնքան բարձր է վտանգվածության ցուցիչը, մտավոր ներուժի պարագայում գործում է հակառակ տրամաբանությունը՝ որքան մեծ է ներուժը, այնքան ցածր է վտանգվածության աստիճանը։

Քանի որ վտանգվածության չափորոշիչները հինգն են, իսկ դրանց առավելագույն աստիճանն արտահայտող ցուցիչը՝ 3-ը, ապա այդ չափորոշիչների համախումբ, ամբողջությամբ վերցված՝ սփյուռքի վտանգվածության ինդեքսը գնահատվում է 15 միավորանոց սանդղակով (5 x 3 սկզբունքով), որտեղ 15 միավորը ցույց է տալիս վտանգվածության ամենաբարձր աստիճանը։

Սփյուռքի վտանգվածության աստիճանը որոշելու համար կիրառվում է հետևյալ բանաձևը. հինգ չափորոշիչների առավել բարձր ցուցիչների գումարը բաժանած երեքի, քանի որ, ինչպես արդեն նշվել է, վտանգվածության աստիճանները երեքն են։ Թվային արտահայտությամբ այն ունի հետևյալ տեսքը[2].

ՎԱ=(գ+ա-ի+խ+մ)/3, որտեղ.

ՎԱ – վտանգվածության աստիճան
գ – գոյապահպանական մարտահրավերներ
ա – արտագաղթը համայնքներից
ի – ինքնության բաղադրիչների կորուստ
խ – խառնամուսնություններ
մ – մտավոր ներուժ

Ըստ այդմ էլ՝ Սփյուռքի վտանգվածության աստիճանը, ըստ համախումբ ինդեքսի, բաժանվում է երեք մասի՝ ցածր, միջին և բարձր։ 15 միավորանոց սանդղակում ստորև ներկայացված միավորների յուրաքանչյուր կարգ ցույց է տալիս վտանգվածության աստիճանը՝ հետևյալ կերպ.

1. 0-5 – վտանգվածության ցածր աստիճան
2. 5-10 – վտանգվածության միջին աստիճան
3. 11-15 – վտանգվածության բարձր աստիճան

Հաշվի առնելով, մի կողմից՝ սույն հոդվածի ծավալների սահմանափակությունը, մյուս կողմից՝ այն հանգամանքը, որ սա վերոհիշյալ մեթոդաբանու-

[2] Բանաձևը մշակելիս լատինականի փոխարեն կիրառվել են հայկական տառեր՝ ընթերցողի համար առավել մատչելի դարձնելու նպատակով։

թյամբ Սփյուռքի վտանգվածությունը գնահատելու առաջին փորձն է, այստեղ այդ վտանգվածության ինդեքսն ու աստիճանը բացահայտելուն ուղղված հետազոտությունն իրականացվել է ըստ հայկական համայնքներ ունեցող չորս խոշոր տարածաշրջանների (Մերձավոր Արևելք, Հյուսիսային և Հարավային Ամերիկաներ, Եվրոպա, հետխորհրդային երկրներ)՝ ավելի ցածր մակարդակով (ըստ երկրների) հայկական համայնքների վտանգվածության ցուցիչի և աստիճանի գնահատումը, թերևս, թողնելով հետագա հետազոտություններին։

Բացի այդ, ակնհայտ է, որ վտանգվածության չափորոշիչներին տրված ցուցիչները մոտավոր են, քանի որ անհնար է ճշգրիտ քանակական տվյալներ ունենալ այն մասին, թե տվյալ համայնքում որքան են խառնամուսնությունները, կամ համայնքի անդամներից քանիսի մոտ ինչ չափով է պահպանված կամ կորսված ազգային ինքնության այս կամ այն բաղադրիչը, օրինակ՝ լեզուն (համայնքի անդամներից քանիսը և որքանով են տիրապետում հայերենին)։ Եթե վտանգվածության ֆիզիկական բաղադրիչների՝ արտագաղթի կամ գոյապահպանական սպառնալիքների հետևանքով համայնքների կրած կորուստները, ինչպես նաև Սփյուռքի մտավոր ներուժը, թեկուզ դժվարությամբ, այնուամենայնիվ, ենթարկվում են քանակական արտահայտության (չափումների), ապա հոգևոր բաղադրիչների՝ ինքնության կորստի և խառնամուսնությունների պարագայում դա անելը խիստ դժվար է, քանի որ խիստ դժվար է ճշգրիտ վիճակագրական տվյալների ձեռքբերումը։ Հետևաբար, Սփյուռքի վտանգվածության չափորոշիչներին տրված մեր քանակական գնահատականները հիմնված են ոչ թե ճշգրիտ վիճակագրության, այլ դիտարկումների՝ սփյուռքահայ մեր հայրենակիցների հետ ունեցած զրույցների, մամուլում, մասնագիտական գրականության մեջ առկա տվյալների, գնահատականների (հաճախ՝ ոչ քանակական) ու տեղեկատվության վրա։ Արդյունքում՝ մոտավոր է նաև մեր հաշվարկած Սփյուռքի համայնքների վտանգվածության համախումբ ցուցիչը։

Չնայած հիշյալ խնդիրներին, այնուամենայնիվ, սույն աշխատանքը որոշակի կարևորություն է ներկայացնում երկու առումներով.

1. հնարավորություն է տալիս քանակական արտահայտություններով կամ չափումներով թեկուզ մոտավոր պատկերացում կազմել ժամանակակից հայկական սփյուռքի վտանգվածության, նրա առջև ծառացած մարտահրավերների մասին,

2. կարող է ծառայել որպես մեթոդաբանական հիմք կամ ուղեցույց՝ հետագա ավելի խորքային հետազոտությունների համար, երբ կդիտարկվեն առանձին տարածաշրջանների կամ երկրների հայ համայնքները՝ հաշվի առնելով նաև, որ այդ մակարդակով հետազոտությունները ժամանակային և ծավալային առումով ավելի տարողունակ են: Այս համատեքստում մեթոդաբանության հետագա ճշգրտումներն ու բարելավումները բացառված չեն:

Սփյուռքի վտանգվածության աստիճանը

Վերոհիշյալ մեթոդաբանությունը կիրառելով ըստ տարածաշրջանների (Մերձավոր Արևելք, հետխորհրդային երկրներ, Հյուսիսային և Հարավային Ամերիկաներ, Եվրոպա) հայկական սփյուռքի համայնքների վրա՝ կարող ենք տալ վերջիններիս դասակարգումն ըստ վտանգվածության աստիճանի:

Սկզբից ևեթ նշենք, որ դիտարկվող չորս տարածարջաններում էլ թե՛ անհատական և թե՛ ինստիտուցիոնալ մակարդակներով հայկական սփյուռքն ունի պատկառելի մտավոր ներուժ[3]: Անգամ Մերձավոր Արևելքում, որն ամենաանբարենպաստ տարածաշրջանն է արտերկրի հայ համայնքների համար, գործում է Սփյուռքի միակ բուհը՝ Բեյրութի Հայկազյան համալսարանը: Այդ պատճառով էլ, չնայած մտավոր ներուժի հետ կապված լրջագույն խնդիրներին, ինչպիսիք են, օրինակ, թույլ համակարգվածությունը, ֆինանսական անբավարարությունը, թույլ կապերը տեղի հայ համայնքների ու հայաստանյան գիտական հանրության և հաստատությունների հետ և այլն, բոլոր չորս տարածաշրջաններում էլ մտավոր ներուժի չափորոշիչով Սփյուռքի վտանգվածության ցուցիչը գնահատվել է միջին՝ 2 միավորով (տե՛ս Աղյուսակ 1):

[3] Մանրամասն տե՛ս *Հարությունյան Գ., Սիմավորյան Ա., Հովյան Վ., Ղանալանյան Տ.,* Սփյուռքի գիտավերլուծական հանրությունը. կազմակերպչական խնդիրներ և համագործակցության հեռանկարներ, Երևան, «Գասպրինտ», 2013; *Սիմավորյան Ա., Հովյան Վ., Ղանալանյան Տ.,* Արտերկրի հայագիտական կենտրոնները. ներուժի գնահատում, Երևան, «Գասպրինտ», 2014:

Աղյուսակ 1

Սփյուռքի վտանգվածության ինդեքսն ու աստիճանը

ՎԱ	Տարածաշրջան	Գոյապահպանական խնդիրներ	Արտագաղթ	Ինքնության բաղադրիչների կորուստ	Խառնամուսնություններ	Մտավոր ներուժ	Ընդհանուր
Բարձր	Մերձ. Արևելք	3	3	2	2	2	12
Միջին	Հետխորհրդային երկրներ	2	1	3	2	2	10
Միջին	Հս. և Հվ. Ամերիկա	0	0	3	3	2	8
Միջին	Եվրոպա	1	1	2	2	2	8

Ինչպես երևում է *Աղյուսակ 1-ից,* Սփյուռքի ամենավտանգված համայնքները գտնվում են Մերձավոր Արևելքում: Դրանց վտանգվածության ցուցիչը, ըստ վերոհիշյալ մեթոդաբանության, կազմել է 12 միավոր, որով նրանք դասվում են վտանգվածության բարձր աստիճան ունեցող համայնքների շարքին: Գոյապահպանության խնդիրների և համայնքներից արտագաղթի չափորոշիչներով Մերձավոր Արևելքի հայ համայնքների վտանգվածության ցուցիչը գնահատվել է ամենաբարձր՝ 3-ական միավորով: Ինչ վերաբերում է ինքնության բաղադրիչների կորստին և խառնամուսնություններին, ապա, թեև այդ տարածաշրջանի հայկական սփյուռքը, լինելով ավանդական և գտնվելով իսլամական միջավայրում, երկար ժամանակ՝ մոտ 3-4 սերունդ, կարողացել է պահպանել իր ազգային նկարագիրը և միևնույն ժամանակ մեծ մասամբ զերծ մնալ խառնամուսնություններից, սակայն վերջին տասնամյակներում այս ցուցանիշներով ևս նկատվում են անհանգստացնող միտումներ: Մասնավորապես, Մերձավոր Արևելքի հայ համայնքների ներկայացուցիչների շրջանում աստիճանաբար ավելի լայն տարածում է գտնում արաբախոսությունը՝ ի հաշիվ մայրենի լեզվի: Նույն միտումը կա խառնամուսնությունների պարագայում: Ըստ Բեյրութի Հայկազյան համալսարանի նախագահ Փոլ Հայդոստյանի, եթե 1960-70-ական թթ. Լիբանանի հայ համայնքում խառնամուսնությունները հազվադեպ երևույթ էին և ընդհանուր առմամբ դիտվում էին որպես ամո-

թալի երևույթ, ապա ներկայում դրանք ընկալվում են որպես սովորական երևույթ։ Հաշվի առնելով հիշյալ միտումները՝ Մերձավոր Արևելքի հայ համայնքների վտանգվածության ցուցիչն ինքնության բաղադրիչների կորստի և խառնամուսնությունների չափորոշիչներով գնահատվել է միջին՝ 2-ական միավորով։ Մխիթարական կարող է լինել այն, որ 12 միավորանոց սանդղակում Մերձավոր Արևելքի հայ համայնքների վտանգվածության համախումբ ցուցիչն առավելագույնը չէ, այլ երեք միավորով զիջում է դրան։

Ինչ վերաբերում է մյուս տարածաշրջանների Սփյուռքին, ապա դրանք, ինչպես երևում է *Աղյուսակ 1-ում*, դասվում են վտանգվածության միջին աստիճան ունեցող համայնքների շարքին։ Սակայն վտանգվածության համախումբ ինդեքսը որոշակիորեն տարբեր է։ Եթե հետխորհրդային երկրների հայ համայնքների պարագայում այն գնահատվել է 10 միավորով, ապա Հյուսիսային և Հարավային Ամերիկաների ու Եվրոպայի հայ համայնքների պարագայում՝ 8-ական միավորով։

Հետխորհրդային երկրների պարագայում վտանգվածության չափորոշիչներից ամենաբարձր ցուցիչը տրվել է ինքնության բաղադրիչների կորստին՝ հաշվի առնելով այդ երկրներում ուծացման խիստ բարձր տեմպերը։ Ռուսաստանում, Ուկրաինայում և այլ երկրներում հաստատված հայությունը լավագույն դեպքում արդեն երկրորդ սերնդի մակարդակում մեծ մասամբ կորցնում է մայրենի լեզուն՝ հայախոսությունը, ինչպես նաև ինքնության մյուս բաղադրիչները։ Որպես ինքնության բաղադրիչներ թույլ կերպով մնում են Հայ Առաքելական եկեղեցու հետևորդ լինելը (ինչը հաճախ կրում է ձևական բնույթ) և թույլ հիշողությունը։

Գոյապահպանության խնդիրների և խառնամուսնությունների չափորոշիչներով վտանգվածության աստիճանը հետխորհրդային երկրների հայ համայնքներում գնահատվել է միջին՝ 2-ական միավորով։ Գոյապահպանական խնդիրների առումով, թեև հետխորհրդային երկրներում իրավիճակն այն աստիճան փոթորկահույզ չէ, որքան Մերձավոր Արևելքում, այնուամենայնիվ, այստեղ էլ ժամանակ առ ժամանակ տեղի են ունենում անկայունության դրսևորումներ՝ կապված միջպետական և ազգամիջյան բախումների, ներքաղաքական ցնցումների և այլնի հետ։ Աբխազական և օսական պատերազմները Վրաստանում, չեչենականը՝ Ռուսաստանում, Մերձդնեստրի ճգնաժամը

Մոլդովայում, ռուս-վրացական հնգօրյա պատերազմը 2008թ. օգոստոսին, միջէթնիկ բախումները միջինասիական երկրներում և դրանց պատճառով միջպետական հարաբերություններում նկատվող լարվածությունը, գունավոր հեղափոխությունները, Դոնբասի պատերազմն ու ճգնաժամն Ուկրաինայում և այլն՝ դրա լավագույն վկայություններն են։

Ինչ վերաբերում է խառնամուսնություններին, ապա դրանք թեև բավական մեծ թիվ են կազմում հետխորհրդային երկրների հայ համայնքներում, այնուամենայնիվ, նկատի ունենալով, որ այդ համայնքները հիմնականում կազմված են հետխորհրդային շրջանում Հայաստանից արտագաղթածներից, կարող ենք ասել, որ վերջինների շրջանում դեռևս թարմ է ավանդական հայկական ընտանիքի գաղափարը։ Խոսքը վերաբերում է հատկապես իգական սեռի ներկայացուցիչներին։ Հետևաբար, կարող ենք ասել, որ խառնամուսնությունները հետխորհրդային երկրների հայ համայնքներում թեև տարածված են, սակայն այնքան մեծ չափերի չեն հասնում, որպեսզի գնահատվեն ամենաբարձր՝ 3 ցուցանիշով։

Ինչ վերաբերում է արտագաղթին համայնքներից, ապա հետխորհրդային երկրների հայ համայնքներում առկա է հակառակ գործընթացը։ Դրանք համալրվում են Հայաստանից արտագաղթողների հաշվին։ Այնուամենայնիվ, կա բացառություն։ Խոսքը Վրաստանի հայ համայնքի մասին է, որը, ավանդաբար լինելով աշխարհի հայաշատ երկրներից մեկը, ինչպես խորհրդային, այնպես էլ հետխորհրդային տարիներին գրանցել է հայերի թվաքանակի նվազման կայուն միտում։ Համաձայն Վրաստանում վերջին մարդահամարի տվյալների (2014թ.)՝ հայերի թիվն այդ երկրում կազմում է մոտ 170 հազ.։ Հաշվի առնելով այս հանգամանքները՝ հետխորհրդային երկրների հայ համայնքների վտանգվածության ցուցիչն արտագաղթի չափորոշիչով գնահատվել է ցածր՝ 1 միավորով։

Ինչպես երևում է *Աղյուսակ 1-ից*, Հյուսիսային և Հարավային Ամերիկաների և Եվրոպայի հայ համայնքների վտանգվածության ցուցիչը գնահատվել է 8-ական միավորով։ Սակայն տարբեր չափորոշիչներով նրանց վտանգվածության ցուցիչները տարբեր են։ Հյուսիսային և Հարավային Ամերիկաներում գոյապահպանության մարտահրավերների (աննշան բացառություններով) և արտագաղթի հետևանքով համայնքների քայքայման խնդիրներ չկան։ Հակա-

ռակը, ինչպես Հայաստանից, այնպես էլ աշխարհի մյուս տարածաշրջանների հայկական համայնքներից հայերի շարունակական ներհոսքն այս տարածաշրջանի երկրներ անընդհատ համալրում է տեղի հայ համայնքները՝ մեծացնելով դրանց թվաքանակը: Այդ պատճառով էլ հիշյալ չափորոշիչներով Հյուսիսային և Հարավային Ամերիկաների հայ համայնքների վտանգվածության ցուցիչը գնահատվել է 0-ական միավորով:

Փոխարենը, ամենաբարձր՝ 3-ական միավորով են գնահատվել մյուս երկու չափորոշիչներով (ինքնության բաղադրիչների կորստով և խառնամուսնություններով) այդ տարածաշրջանի հայ համայնքների վտանգվածության ցուցիչները, քանի որ Հյուսիսային և Հարավային Ամերիկաներում և՛ խիստ բարձր են ուծացման տեմպերը, և՛ խիստ շատ են խառնամուսնությունները:

Մի փոքր այլ է իրավիճակը Եվրոպայում: Թեև մինչև վերջին ժամանակներս Եվրոպան համարվում էր անվտանգ կեցության վայր, այդ թվում նաև հայերի համար, այնուամենայնիվ, վերջին տարիներին այնտեղ գրանցվող ահաբեկչությունները (2015թ. նոյեմբերին Փարիզում, 2016թ. մարտին Բրյուսելում և այլն), ինչպես նաև Մերձավոր Արևելքի ու Աֆրիկայի երկրներից միգրանտների գրեթե անկառավարելի ներհոսքը որոշակի անկայունության միջավայր են ստեղծում եվրոպական երկրներում, որի հետևանքով վտանգի մեջ են հայտնվում նաև հայ համայնքները: Օրինակ, 2015թ. նոյեմբերին Փարիզի ահաբեկչության ժամանակ զոհ գնաց նաև դեռատի մի հայ աղջիկ: Չնայած դրան, անկայունության դրսևորումները Եվրոպայում դեռևս այն աստիճանի ու ծավալների չեն, ինչպես Մերձավոր Արևելքում: Դրանք համեմատաբար նոր երևույթ են հետպատերազմյան Եվրոպայում: Հետևաբար, գոյապահպանական սպառնալիքների չափորոշիչով Եվրոպայի հայ համայնքների վտանգվածության ցուցիչը գնահատվել է ցածր՝ 1 միավորով:

Համայնքներից արտագաղթի առումով իրավիճակը Եվրոպայում գրեթե նույնն է, ինչ հետխորհրդային երկրների և Հյուսիսային ու Հարավային Ամերիկաների հայ համայնքներում: Եվրոպայի հայ համայնքները նույնպես շարունակաբար համալրվում են Հայաստանից ու Մերձավոր Արևելքի հայ համայնքներից հայերի ներհոսքի հետևանքով: Այնուամենայնիվ, հատկապես Արևելյան Եվրոպայի հայ համայնքներում (Հունաստան, Բուլղարիա և այլն), որտեղ տնտեսական պայմանները համեմատաբար անբարենպաստ են,

նկատվում է հայերի գաղթ դեպի արևմտաեվրոպական երկրներ, ԱՄՆ և Կանադա: Սույն հանգամանքը հաշվի առնելով էլ՝ Եվրոպայում հայ համայնքների վտանգվածության ցուցիչն արտագաղթի չափորոշիչով գնահատվել է ցածր՝ 1 միավորով:

Ինչ վերաբերում է վտանգվածության մյուս չափորոշիչներին՝ ինքնության բաղադրիչների կորստին և խառնամուսնություններին, ապա այդ երևույթները նույնպես բավական տարածված են Եվրոպայի հայ համայնքներում: Բայց և այնպես, դրանք իրենց ծավալներով և աստիճանով որոշակիորեն զիջում են Հյուսիսային և Հարավային Ամերիկաների, ինչպես նաև հետխորհրդային երկրների (ինքնության բաղադրիչների կորստի առումով) հայ համայնքներում նկատվող նույն երևույթներին: Հետևաբար, այդ երկու չափորոշիչներով էլ Եվրոպայի հայ համայնքների վտանգվածության ցուցիչը գնահատվել է միջին՝ 2-ական միավորով:

Եվրոպան և Հյուսիսային ու Հարավային Ամերիկաները քաղաքակրթական և որոշ չափով նաև՝ քաղաքական առումներով գտնվում են միևնույն՝ արևմտյան ծիրում: Հետևաբար, այս երկու տարածաշրջանների իրավիճակների միջև կա որոշակի նմանություն: Ուստի, ավելորդ չէ նաև որոշակի համեմատությունն այդ տարածաշրջանների հայ համայնքների վտանգվածության չափորոշիչների միջև: Համեմատությունը ցույց է տալիս, որ երկու տարածաշրջանների հայ համայնքների առջև էլ ծառացած են նույն խնդիրները: Պարզապես գոյապահպանության խնդիրների և արտագաղթի հետևանքով համայնքների քայքայման խնդիրները մի փոքր ավելի սուր են Եվրոպայի, իսկ ինքնության բաղադրիչների կորստի և խառնամուսնությունների խնդիրները՝ Հյուսիսային և Հարավային Ամերիկաների հայկական սփյուռքում:

Այսպիսով, դիտարկումները ցույց են տալիս, որ աշխարհի վերոհիշյալ չորս տարածաշրջանների հայ համայնքներն ունեն վտանգվածության բարձր կամ միջին աստիճան: Բարձր աստիճանի վտանգվածություն ունեն Մերձավոր Արևելքի հայ համայնքները (համախումբ 12 միավոր): Հետխորհրդային երկրների, Հյուսիսային ու Հարավային Ամերիկաների և Եվրոպայի հայ համայնքները՝ համապատասանաբար 10, 8 և 8 համախումբ միավորներով, կազմում են Սփյուռքի՝ վտանգվածության միջին աստիճան ունեցող համայնքները: Վտանգվածության ցածր աստիճան ունեցող համայնքներ, համաձայն մեր դիտարկումների, Սփյուռքում, ցավոք, չկան:

«ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ» ԻՆՈՎԱՑԻՈՆ ԻՆՏԵԳՐՈՒՄ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ ԵՎ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

Սամվել Մանուկյան[*]

Խնդրահարույց իրավիճակ

Անդրկովկասում իրականացվում են երկու աշխարհատնտեսական տրանսպորտային-հաղորդակցային նախագծեր՝ Հյուսիս-Հարավ և Արևելք-Արևմուտք («Մետաքսի ճանապարհ» նախագիծը)։

Արևելք-Արևմուտք տրանսպորտային միջանցքի շրջանակում Ադրբեջանը կարող է առանցքային դեր ունենալ, իսկ Հայաստանը փաստորեն դուրս է մղված նախագծից։ Ավարտման փուլում է գտնվում Բաքու-Թբիլիսի-Ախալքալաք-Կարս երկաթուղու շինարարությունը։ Հիմքեր չկան կարծելու, թե տեսանելի ապագայում[1] կբացվի Իրան-Ջուլֆա (Նախիջևան)-Երևան-Գյումրի-Կարս երկաթուղին։

Հյուսիս-Հարավ նախագծի երկաթուղային բաղադրիչներն այսօր փակ չեն։ Սակայն իրականացման փուլում է Ռուսաստան-Ադրբեջան-Իրան երկաթուղային նախագծի Աստարա (Ադրբեջան)-Աստարա (Իրան)-Ռեշտ-Կազվին հատվածը. այս նախագծում Ադրբեջանն ունի առանցքային դեր։

Ռուսաստան-Աբխազիա-Վրաստան-Հայաստան-Նախիջևան-Իրան երկաթուղին փակ է երկու օղակներում, և հիմքեր չկան ենթադրելու, թե տեսանելի ապագայում այդ երկաթուղին կբացվի։

Իրականացման փուլում է Իրան-Հայաստան-Վրաստան ավտոմայրուղին (դեպի Փոթի և Բաթում ճյուղավորումներով)։ Այս մայրուղին ներառում է Հայաստանը Իրան-ԵՄ ինտեգրացիոն նախագծում։ Սակայն հիմքեր չկան են-

---

[*] *IPSC* Քաղաքական և սոցիալական խորհրդատվությունների ինստիտուտ, վերլուծաբան, սոց.գ.թ.։

[1] Հոդվածում «տեսանելի ապագան» օգտագործվում է ստացիոնար քաղաքական և տնտեսական գործընթացների կանխատեսումների իմաստով, որոնցից բացառված են աշխարհաքաղաքական ֆորսմաժորային սցենարները, որոնք ի վիճակի կլինեին արմատապես փոխել անդրկովկասյան վեց հանրապետությունների աշխարհաքաղաքական կողմնորոշումները։

թաղրելու, թե տեսանելի ապագայում մայրուղին, ինչպես նախատեսվում է, կշարունակվի դեպի Ռուսաստան: Այս փաստը Հայաստանի և Ռուսաստանի միջև լատենտ լարվածություն առաջացնելու պոտենցիալ ունի:

Այսպիսով, Հայաստանը բացառվել է ԵԱՏՄ ցամաքային տրանսպորտային նախագծերից, իսկ Ադրբեջանը, առանցքային դեր ունենալով երկու նախագծերում էլ, կբարձրացնի իր աշխարհաքաղաքական գինը Հայաստանի դաշնակիցների՝ Ռուսաստանի և Իրանի ռազմավարություններում:

Քաղաքականության ձևակերպումը

Անդրկովկասյան երեք հիմնական հանրապետությունների դերերի աշխարհատնտեսական անհավասարակշռությունը փոխհատուցելու համար անհրաժեշտ է այնպես ընդլայնել Հյուսիս-Հարավ ինտեգրման հայեցակարգի բովանդակությունը, որպեսզի նոր համատեքստում Հայաստաը ձեռք բերի կարևոր դեր:

Նոր ինտեգրացիոն քաղաքականությունը, իրագործվելու համար, պետք է բավարարի հետևյալ չափանիշները: Այն պետք է համահունչ լինի.

- գլոբալ միտումներին և հիմնախնդիրներին,
- ԵԱՏՄ ռազմավարական նպատակներին,
- Վրաստանի՝ որպես մի երկրի զարգացման ռազմավարություններին, որն այսօր «չի ներգրվում» Հյուսիս-Հարավ ինտեգրացիոն նախագծում:

Ռազմավարությունը

Վերը ներկայացված քաղաքականության իրականացման ռազմավարություն կարող է դառնալ Ռուսաստան-Վրաստան-Հայաստան-Իրան ինովացիոն ինտեգրացիոն նախագծի նախաձեռնումը:

Ռազմավարության իրագործելիության նախադրյալները

- Ձևավորված ռազմավարությունը համապատասխանում է երեք թվարկված չափանիշներին: Հարկ է հատուկ ընդգծել Վրաստանի զարգացման ռազմավարություններին համապատասխանությունը, որը, որևէ այլընտրանք չունենալու պատճառով, ստիպված է ներգրվել թուրք-ադրբեջանական համատեքստում, ինչն առաջ է բերում ինչպես ուղղափառքրիստոնյա ազգի հանրային լայն շերտերի, այնպես էլ նրա մտավորա-

կանության (ինչպես «հին», այնպես էլ «նոր») դժգոհությունը, որի համար նվաստացուցիչ է մի երկրի կարգավիճակը, որը սպասարկում է տարանցման ճանապարհին ու ապրում է ի հաշիվ ճանապարհահարկի և արևմտյան օգնության:

- Հայաստանը՝ ԵԱՏՄ անդամ:
- Հայաստանն ունի GSP+ արտոնյալ առևտրային ռեժիմ, ինչը նշանակում է, որ *հայկական ավելի քան 6 հազար անուն ապրանքներ կարտահանվեն Եվրամիության երկրներ զրոյական կամ իջեցված մաքսահարկով:*
- ԵԱՏՄ բարձրագույն կառավարող մարմիններում գիտակցում են *ինովացիոն զարգացման բացառիկ նշանակությունը,* կատարվում են գործողություններ այս ուղղությամբ:
- Իրանի դեմ պատժամիջոցների հանումը:
- ԵԱՏՄ-ի և Իրանի՝ համագործակցության երկկողմանի ձգտումը:
- Վրաստանի հետ կառուցողական փոխհարաբերությունների ընդլայնման հնարավորությունը, ինչը շատ կարևոր է ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Վրաստանի համար (Վրաստանի անշեղ դիրքորոշումը զգալի չափով արդյունք է Արևմուտքից չափից ավելի մեծ կախվածության):
- Առանձնահատուկ նախադրյալ է «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի կուտակած բավական զգալի փորձը Հայաստանի գիտատեխնիկական պոտենցիալի վերականգնմանն աջակցելու ուղղությամբ:

Ակնհայտ է, որ ռազմավարության իրագործման համար սկզբում անհրաժեշտ է նախնական համեմատական գնահատական տալ Ռուսաստանի, Վրաստանի, Հայաստանի և Իրանի ինովացիոն զարգացման պոտենցիալներին: Փորձենք տալ այդ գնահատականը:

Վերլուծության գործիքը

Որպես նման նախնական գնահատական օգտագործվել է Գլոբալ ինովացիոն ինդեքսը (*Global Innovation Index*): Ինդեքսը մշակվել է *Բիզնեսի կառավարման եվրոպական դպրոցի* և *Ինտելեկտուալ սեփականության համաշխարհային կազմակերպության* կողմից: Օգտագործվել են 2015թ. զեկույցի[2] տվյալները: Գլոբալ ինովացիոն ինդեքսի կառույցը ներկայացված է *Նկար 1*-ում: Ին-

[2] The Global Innovation Index 2015, https://www.globalinnovationindex.org/userfiles/file/reportpdf/gii-full-report-2015-v6.pdf

դեքսն ունի քառամակարդակ կառուցվածք: Վերին մակարդակը կազմված է հենց ինդեքսից, երկու ենթաինդեքսներից՝ *ինովացիոն մուտքերի ենթաինդեքսից*, որը գնահատում է այն գործոնների վիճակն ու մակարդակը, որոնք որոշում են ինովացիաների զարգացումը, և *ինովացիոն արդյունքների ենթաինդեքսից*, որոնք գնահատում են ինովացիոն գործունեության արդյունքները (նկարում կանաչ ուղղանկյունների մեջ են):

Ինովացիոն արդյունավետությունը *ինովացիոն արդյունքների ենթաինդեքսի* հարաբերությունն է *ինովացիոն մուտքերի ենթաինդեքսին*:

Նկար 1

Գլոբալ ինովացիոն ինդեքսի կառուցվածքը



Երկրորդ մակարդակը կազմված է յոթ բաղադրիչից, որոնցից հինգն օգտագործվում են *ինովացիոն մուտքերի ենթաինդեքսը,* իսկ երկուսը՝ *ինովացիոն արդյունքների ենթաինդեքսը* դուրս բերելու համար (բաղադրիչների անվանումները տե՛ս դիագրամում):

Երրորդ մակարդակը ներկայացնում են այն ենթաբաղադրիչները, որոնք օգտագործվում են բաղադրիչները դուրս բերելու համար: Յուրաքանչյուր բաղադրիչ դուրս է բերվում ըստ երեք ենթաբաղադրիչների (ենթաբաղադրիչների անվանումները տե՛ս նկարում): Ընդհանուր առմամբ կա 21 ենթաբաղադրիչ:

Չորրորդ մակարդակը այն ինդիկատորներն են, որոնք օգտագործվում են ենթաբաղադրիչները գնահատելու համար: Օգտագործվում են ընդհանուր առմամբ 79 ինդիկատորներ, որոնք ընտրվել են տարբեր աղբյուրներից, այդ թվում Համաշխարհային բանկի տվյալների շտեմարանից, Համաշխարհային բանկի ինստիտուտի կառավարման որակի ինդեքսներից, *Doing Business* ինդեքսներից, ՄԱԿ տվյալներից, միջազգային տարբեր սոցիոլոգիական հարցումների տվյալներից և այլն: Նկարում ինդիկատորները պատկերված չեն[3]:

Վերլուծության հիմնական արդյունքները

Իրականացվել է Գլոբալ ինովացիոն ինդեքսի առաջին երեք մակարդակների տվյալների վերլուծություն: Դիտարկվել են Ռուսաստանի, Վրաստանի, Հայաստանի, Իրանի, ինչպես նաև Ադրբեջանի համապատասխան ցուցանիշները: Ստացվել են հետևյալ հիմնական արդյունքները.

- Ինդեքսի բոլոր չորս մակարդակներում *առաջատարը Ռուսաստանն* է: Երկիրն առաջին տեղում է առաջին մակարդակի չորսից երեք ցուցանիշների գծով, երկրորդ մակարդակի յոթ ցուցանիշներից չորսի, երրորդ մակարդակի 21 ցուցանիշներից 8-ի և 79 ինդիկատորներից 39-ի գծով (*Աղյուսակ 1*):
- Երկրորդ և երրորդ տեղերը կիսում են Հայաստանը և Վրաստանը: Հայաստանն առաջին տեղում է առաջին մակարդակի մեկ ցուցանիշի (Վրաստան՝ 0), երկրորդ մակարդակի 2 ցուցանիշի (Վրաստան՝ 1), երրորդ մակարդակի 5 ցուցանիշի (Վրաստան՝ 4) և 13 ինդիկատորների (Վրաստան՝ 14) գծով:
- Իրանը բավականաչափ հետ է մնում՝ զբաղեցնելով չորրորդ տեղը և փոքր-ինչ առաջ է Ադրբեջանից:

[3] Հասանելի են *The Global Innovation Index 2015* հաշվետվությունում:

Աղյուսակ 2

Ցուցանիշ	Ռուսաստան	Հայաստան	Վրաստան	Իրան	Աղրբ.
Գլոբալ ինովացիոն ինդեքս 2014	49	65	74	120	101
Գլոբալ ինովացիոն ինդեքս 2015	48	61	73	106	93
Ինովացիոն արդյունքների ենթաինդեքս	49	51	86	105	103
Ինովացիոն ներդրումների ենթաինդեքս	52	69	67	106	89
Ինովացիոն արդյունավետություն	60	34	107	103	115

Աղյուսակ 3

Ցուցանիշ	Ռուսաստան	Հայաստան	Վրաստան	Իրան	Աղրբ.
1 Ինստիտուտներ	80	57	51	126	81
2 Մարդկային կապիտալ և հետազոտություններ	26	105	91	46	100
3 Ենթակառուցվածքներ	65	76	79	68	78
4 Շուկաների զարգացման աստիճան	94	36	42	139	47
5 Բիզնես գործընթացների զարգացման աստիճան	44	89	105	130	136
6 Գիտելիքների և տեխնոլոգիաների արդյունքներ	33	46	67	90	108
7 Կրեատիվ արդյունքներ	79	55	99	116	93

Երկրորդ մակարդակի ցուցանիշների բովանդակության և ըստ այդ ցուցանիշների երկրների դիրքի դիտարկումը (*Աղյուսակ 3*) ճշգրտում է հետևյալ եզրակացությունները.

- Պարզվում է, որ Հայաստանն առաջինն է *կրեատիվ արդյունքների* բաղադրիչով, իսկ *գիտելիքների և տեխնոլոգիաների արդյունքների* բաղադրիչով առաջինը Ռուսաստանն է, Հայաստանը երկրորդ տեղում է:
- Հայաստանը և Վրաստանը մրցակցում են *Ինստիտուտներ* և *Շուկաների զարգացման աստիճան* բաղադրիչների գծով: Առաջին բաղադրիչի գծով առաջատարը Հայաստանն է, երկրորդի գծով՝ Վրաստանը:
- Ռուսաստանն առաջինն է *Մարդկային կապիտալ և հետազոտություններ*, ինչպես նաև *Ենթակառուցվածքներ* բաղադրիչների գծով: Այս բաղադրիչներով երկրորդ տեղում Իրանն է:

Հետագա քայլերը

Ակնհայտ է, որ կոնկրետ ռազմավարությունների և գործողությունների մշակման համար անհրաժեշտ է կատարել Ռուսաստանի, Վրաստանի, Հայաստանի և Իրանի իրավիճակի բովանդակային համեմատական վերլուծություն ինդիկատորների մակարդակով՝ ռելևանտ այլ տեղեկատվության ներգրավմամբ։

Ինովացիոն ինտեգրացիոն ռազմավարության համար անհրաժեշտ են նաև.

- Գտնել գործընկերներ Ռուսաստանում, Վրաստանում և Իրանում, որոնք կկարողանան աջակցել այդ չորս երկրների ինովացիոն ինտեգրմանը։
- Հայաստանի փոքր ու միջին բիզնեսի[4] ինովացիոն ձեռնարկությունների և ինովացիոն գաղափարների տվյալների շտեմարանի ձևավորում (ընդլայնված «Բիզնես-կատալոգ»), որով Հայաստանը կմասնակցի ինովացիոն ինտեգրմանը։
- Գործընկերների օգնությամբ նման շտեմարանի ձևավորում Ռուսաստանում, Վրաստանում և Իրանում։
- Հայաստանում աջակցություն մասնագիտացված պետական, բիզնես և ասոցիատիվ կառույցների ձևավորմանը, որոնք շահագրգռված են *ինովացիոն ինտեգրման մարքեթինգի* անցկացմամբ։
- Ռուսաստանում, Վրաստանում, Հայաստանում և Իրանում *ինովացիոն ինտեգրման կլաստերների* նույնականացում, դրանց զարգացման պոտենցիալների, տնտեսության վրա դրանց ներգործության շրջանակների և բովանդակության բազմակողմանի գնահատում (ինովացիոն ոլորտի փորձագետների միջոցով)։

[4] Ինչպես ցույց է տվել հետազոտությունների փորձը Հայաստանում, այդ պոտենցիալն անհամեմատ ավելի զգալի է, քան կարող է թվալ ավերիչ 90-ականներից և ինտելեկտուալ-պրոֆեսիոնալ առումով լճացած 2000-ականներից հետո։ Տե՛ս Հայաստանի ժողովրդագրական իրավիճակի բարելավման հետազոտական ծրագիրը. Ժողովրդագրություն, զարգացման ռազմավարություն և տեխնոլոգիաներ (Երկրորդ հետազոտական խումբ)։ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, *UNFPA*, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Երևան, 2014, 217 էջ (ձեռագիր)։

ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՄԻՋԱՆՑՔԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ (*SWOT* ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

Արմեն Մանվելյան*

Իրանի նկատմամբ պատժամիջոցների չեղարկումը ռազմաքաղաքական նոր իրավիճակ է ստեղծել տարածաշրջանում, ինչն արտահայտվում է Իրանի հետ կապված էներգետիկ և տրանսպորտային ծրագրերի նկատմամբ հետաքրքրության վերականգնմամբ: Եթե նախկինում Հյուսիս-Հարավ կոչվող ծրագիրը պատժամիջոցների հետևանքով թվում էր անիրականանալի, ապա այսօր տարածաշրջանում սկսվում է նոր մրցակցություն, որի նպատակն է այդ միջանցքում կարևոր տեղ զբաղեցնել, ինչը ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական դիվիդենտներ կբերի հիմնական խաղացողներին:

Հյուսիս-Հարավ միջանցքի իրականացման գործընթացում կարևոր տեղ է զբաղեցնում էներգետիկ միջանցքի կառուցման, հատկապես էլեկտրաէներգիայի տարանցման հարցը, ինչը ռազմավարական նշանակություն ունի տարածաշրջանի պետությունների համար:

Սկսվում է նոր մրցակցություն, որտեղ միմյանց են բախվում Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի շահերը: Հստակ է, որ վերջինս այս ծրագրում իր ակտիվացումը դիտարկում է նաև Հայաստանին մեկուսացնելու իր քաղաքականության շրջանակներում:

Ակտիվություն Հյուսիս-Հարավ էներգամիջանցքում

Վերջին մեկ տարվա ընթացքում թե՛ Հայաստանը և թե՛ Ադրբեջանն ակտիվացրել են հարաբերություններն Իրանի և Ռուսաստանի հետ՝ անցկացնելով մի շարք համատեղ հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվում և կնքվում են պայմանագրեր՝ եռակողմ կամ քառակողմ ձևաչափով գործընթացին

---

* Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, էներգետիկ աշխարհաքաղաքականության և միջազգային անվտանգության հարցերով մասնագետ, պ.գ.թ.:

մասնակցելու համար: Այսպես, 2015թ. հոկտեմբերի 30-ին Մոսկվայում հանդիպեցին Ռուսաստանի, Իրանի և Ադրբեջանի էներգետիկայի նախարարները, որոնք քննարկեցին էլեկտրաէներգիայի փոխանակման հիմնախնդիրները[1]: 2015թ. դեկտեմբերի 23-ին Երևանում կայացավ քառակողմ հանդիպում Հայաստանի, Ռուսաստանի («Ռուսական ցանցեր» ընկերության, ՌԴ էներգետիկայի նախարարության ներկայացուցչի), Վրաստանի և Իրանի էներգետիկայի նախարարների մասնակցությամբ: Հանդիպման արդյունքում կնքվեց փոխհամաձայնության հուշագիր, որով կողմերը հայտարարեցին էլեկտրաէներգիայի փոխանակման շուրջ քննարկումներ սկսելու մասին[2]:

Ձևավորվող նոր մրցակցությունում իր դիրքերն ամրապնդելու համար 2016թ. փետրվարին Իլհամ Ալիևն այցելեց Թեհրան, որտեղ, ըստ Բաքվի տվյալների, քննարկվեց 2016թ. ընթացքում ավարտին հասցնել Աստարա (Ադրբեջան) – Աստարա (Իրան) երկաթգիծը և սկսել համագործակցություն էլեկտրաէներգիայի փոխանակման ծրագրերով, ինչպես նաև համաձայնագիր ստորագրվեց Արաքս գետի վրա «Հուդաֆերին» և «Գազ Գալասի» կոչվող հիդրոկայանների կառուցման և համատեղ շահագործման շուրջ[3]: Սա, թերևս, կողմերի առայժմ միակ գործնական համաձայնագիրն էր, որը կնքվել է նրանց միջև:

Ապրիլի 7-ին Բաքվում հանդիպեցին Ռուսաստանի, Ադրբեջանի և Իրանի արտգործնախարարները, քննարկվեցին Հյուսիս-Հարավ միջանցքի ծրագրի իրականացման շուրջ գործնական քայլեր ձեռնարկելու հարցերը: Այս մասին մամուլի ասուլիսում հայտնեց ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը:

Մի քանի օր անց՝ ապրիլի 13-ին, Երևանում հավաքվեցին չորս պետությունների՝ Ռուսաստանի, Վրաստանի, Հայաստանի և Իրանի էներգետիկայի նախարարները: Քննարկման հիմնական թեման էր էներգետիկ համագործակցությունը և հատկապես Հյուսիս-Հարավ էլեկտրահաղորդման համակարգի հիմնումը, ինչի շուրջ համագործակցությունն արդեն իսկ ընթանում է ոչ միայն քառակողմ, այլև երկկողմ ձևաչափերով՝ Հայաստան-Իրան և Հայաստան-Վրաստան[4]:

[1] Россия, Азербайджан и Иран планируют синхронизировать энергосистемы, http://pcsu.ru/%D1
[2] Քառակողմ հանդիպում Հայաստանի, Ռուսաստանի, Վրաստանի և Իրանի մասնակցությամբ, http://www.minenergy.am/article/520 23.12.2015
[3] Баку и Тегеран наращивают энергообмен — СМИ, http://eurasnews.ru/turtsiya
[4] Երևանում հանդիպել են ՀՀ, ՌԴ, Իրանի և Վրաստանի էներգետիկայի նախարարները, http://www.verelq.am/hy/node/7430

Երևանյան հանդիպումը, ի տարբերություն Բաքվի եռակողմ հանդիպման, աչքի ընկավ գործնականությամբ, մասնավորապես՝ բանակցությունների վերջում կողմերը ստորագրեցին Հյուսիս-Հարավ էներգետիկ համագործակցության ճանապարհային քարտեզը, հանդիպման արձանագրությունը և փոխըմբռնման հուշագիր:

Այս հանդիպումների ժամանակ կողմերը քննարկել են այն պայմանները, որոնք կնպաստեն չորս պետությունների էներգետիկ համակարգերի միավորմանը, փոխադարձ հոսքերի կարգավորմանը և կառավարմանը, ինչպես նաև արդյունավետության, անվտանգության և հուսալիության հարցեր: Հանդիպման ժամանակ դիտարկվել է նաև ստեղծված համակարգող խորհրդի գործունեությունը, նախանշվել են դրա հետագա քայլերը:

Նշենք, որ ըստ ճանապարհային քարտեզի՝ նախատեսվում է 2018թ. շահագործման հանձնել Հայաստան-Վրաստան 400/500 կվ լարման բարձրավոլտ էլեկտրահաղորդման գիծը, ինչը հնարավորություն կտա Հայաստանին սինքրոնացնել իր էներեգետիկ ցանցի գործունեությունը Վրաստանի համակարգի հետ և ապահովել մինչև 350 մվտ հզորության էլեկտրաէներգիայի փոխանակումն առաջին շրջանում՝ մինչև 2021թ. 700 մվտ հասցնելու հնարավորությամբ: Զուգահեռաբար, արդեն 2018թ. նախատեսվում է շահագործման հանձնել նաև Հայաստան-Իրան 400 կվ լարման բարձրավոլտ 3-րդ գիծը, ինչը կավելացնի էլեկտրաէներգիայի փոխանակման հզորությունը մինչև 1200 մվտ[5]:

Հայաստան-Ադրբեջան մրցակցությունը և դրա ռազմավարական հեռանկարները (SWOT վերլուծություն)[6]

SWOT-ը ռազմավարական վերլուծության մեթոդոլոգիա է, որը վեր է հանում տվյալ գործընթացում առկա ուժեղ և թույլ կողմերը (*strengths and weaknesses*), հնարավորություններն ու վտանգները (*opportunities and threats*), որոնք գնահատվում են համապատասխանաբար ներքին և արտաքին միջավայրի ուսումնասիրությամբ: Նշենք, որ *SWOT* ծրագիրը որոշումների կայացման և ռազմավարական պլանավորման մեթոդոլոգիա է:

Նշված մեթոդոլոգիայով ներքին և արտաքին միջավայրերի վերլուծության նպատակն է վերհանել որոշակի ռազմավարության թույլ և ուժեղ կող-

[5] Նույն տեղում:

[6] *SWOT* վերլուծություն իրականացնելիս հեղինակն օգտվել է պ.գ.թ. Դ.Մանասյանի մշակումներից:

մերը, գնահատել տվյալ ծրագրում պետության ներուժը և ընդգծել թույլ կողմերը, նպաստել պետության հնարավորությունների ընդլայնմանը և սպառնալիքների չեզոքացմանը, ինչպես նաև գնահատել արտաքին միջավայրում պետության մրցակցային հնարավորությունները և ընդգծել շահերը:

Մեթոդոլոգիայի աշխատեցման քայլերը.

1. արտաքին և ներքին միջավայրի վերլուծություն,
2. *SWOT* մատրիցայի ռազմավարությունների վերլուծություն և համապատասխան վերլուծական նյութի պատրաստում,
3. գործողությունների ծրագրերի մշակում:

Եվ այսպես, որպես առաջին քայլ պետք է նախանշենք ստեղծված իրավիճակը և արտաքին ու ներքին միջավայրի վերլուծությունը:



Այս վերլուծության համար հարկավոր է ուշադրություն դարձնել *տնտեսական, քաղաքական, սոցիալ-մշակութային, տեխնոլոգիական* խնդիրների վրա, որոնք առկա են ներքին և արտաքին միջավայրերում:

Հարավային Կովկասում Հայաստանի և Ադրբեջանի համար տվյալ ծրագրի իրականացման համար կարևոր է համագործակցությունն Իրանի և Ռուսաստանի հետ, ինչպես նաև Վրաստանի ներգրավվածությունը նախագծում: Եթե այս խնդիրները դիտարկենք առանձին-առանձին, ապա կունենանք հետևյալ պատկերը.

Հայաստան - արտաքին միջավայր.

1. *տնտեսական գործոն* ՝ էներգետիկ ներգրավվածություն և այդ հարցում համագործակցության փորձ թե՛ Իրանի և թե՛ Ռուսաստանի, ինչպես նաև Վրաստանի հետ,
2. *քաղաքական* ՝ ռազմավարական-դաշնակցային և ռազմավարական-գործընկերային (քաղաքական) հարաբերություններ համապատասխանաբար Ռուսաստանի և Իրանի, ինչպես նաև բարիդրացիական հարաբերություններ Վրաստանի հետ,
3. *սոցիալ-մշակութային* ՝ վերջին 200 տարում ձևավորված և ամրապնդված մշակութային հարաբերություններ Ռուսաստանի և նոր ձևավորվող, բայց պատմական երկարատև փորձ ունեցող հարաբերություններ Իրանի հետ, ավանդական հարաբերություններ Վրաստանի հետ,
4. *տեխնոլոգիական* ՝ էլեկտրաէներգիայի փոխանակման և տարանցման համակարգերի ու բարձրավոլտ էներգետիկ ցանցերի կառավարման հմտություններ, փորձ և համապատասխան տեխնոլոգիաներ (դեռ ԽՍՀՄ տարիներին ՀԽՍՀ-ն հանդիսանում էր տարածաշրջանում էլեկտրաէներգիայի բաշխման և տարանցման հիմնական կենտրոնը):

Ադրբեջան-արտաքին միջավայր.

1. *տնտեսական գործոն* ՝ էլեկտրաէներգիայի տարանցման հարցում նոր ձևավորվող հարաբերություններ Ռուսաստանի և Իրանի հետ, մրցակցային կողմերի հետ հատկապես նավթի և գազի արտահանման շուկաներում ու տարանցման հարցում,
2. *քաղաքական* ՝ ռազմավարական գործընկերային և գործընկերային (տնտեսական) հարաբերություններ համապատասխանաբար Ռուսաստանի և Իրանի հետ,
3. *սոցիալ-մշակութային* ՝ կրոնական և սոցիալ-մշակութային ընդհանրություն Իրանի (խորքային հակասություններ շիա իսլամի տարածման հարցում) և մշակութային որոշակի հարաբերություններ Ռուսաստանի հետ՝ ձևավորված հատկապես ԽՍՀՄ գոյության տարիներին,
4. *տեխնոլոգիական* ՝ էլեկտրաէներգիայի փոխանակման հարցում աշխատանքային ոչ մեծ փորձ, համապատասխան կադրերի բացակայություն, սակայն ֆինանսական նախընտրելի հնարավորություններով:

Վերլուծության այս մասի իրականացման համար հարկավոր է ներգրավել համապատասխան փորձագետներ նյութերի հավաքագրման, հետազոտության իրականացման և առաջադրանքների բաշխման համար, *SWOT* մատրիցայի յուրաքանչյուր դաշտում զուգորդությունների դիտարկում, առանձնացում և վերլուծություն:

Արտաքին և ներքին միջավայրում առկա և ձևավորվող իրավիճակի դինամիկան ու փոփոխությունները հնարավոր է հասկանալ միայն այս սկզբունքների հաշվառման, համեմատական վերլուծության և շարժման դինամիկան հասկանալու դեպքում, իսկ դրա համար հարկավոր է առանձին-առանձին վեր հանել դրանք թե՛ Հայաստանի և թե՛ Ադրբեջանի դեպքում:

Հայաստանի Հանրապետություն

Ուժեղ կողմեր 1. Էներգետիկ համագործակցության հարուստ փորձ թե՛ Ռուսաստանի և թե՛ Իրանի հետ: 2. **Վրաստանի ընդգրկում ծրագրում:** 3. Քաղաքական և տնտեսական ներքին կայունություն: 4. Համեմատաբար հեռահարություն հակամարտության շրջաններից:	**Թույլ կողմեր** 1. **Վրաստանի գործոնը**: 2. Ֆինանսական ներդրումների դժվարություններ: 3. Հարաբերությունների բացակայությունն արևմտյան հարևան Թուրքիայի հետ:
Հնարավորություններ 1. Պետական աջակցություն ծրագրերի իրականացման հարցում: 2. Ներդրումների խրախուսում, միջազգային ընկերությունների ներգրավում: 3. Ռուսաստանի և Իրանի հետ էներգետիկ համագործակցության ընդլայնում:	**Վտանգներ** 1. Չլուծված հակամարտության առկայություն: 2. Ադրբեջանի կողմից ռազմական գործողությունների հրահրում Արցախում:

Ադրբեջանի Հանրապետություն

Ուժեղ կողմեր 1. Պետական աջակցություն և պետական ներդրումներ ծրագրերում: 2. Երրորդ կողմի՝ **Վրաստանի բացակայությունը:** 3. Ուղղակի ելք դեպի Ռուսաստան: 4. Ֆինանսական լայն հնարավորություններ:	**Թույլ կողմեր** 1. **Վրաստանի բացակայությունը ծրագրից:** 2. Համագործակցության փորձի բացակայությունը: 3. Ներքին քաղաքատնտեսական ճգնաժամի խնդիրներ:
Հնարավորություններ 1. Հեռանկարային նոր ծրագրում ռազմավարական դիրք զբաղեցնելը: 2. Ֆինանսական ներդրումների ներգրավումը:	**Վտանգներ** 1. Չլուծված հակամարտության մոտիկությունը: 2. Ռազմական գործողությունների վերսկսման դեպքում էներգետիկ օբյեկտների թիրախավորում:

Ծրագրի իրականացման վրա ազդող հիմնական գործոնները

SWOT մատրիցայի ստեղծման նպատակն է՝ առաջնահերթ խնդիրների դուրսբերումը և դասակարգումը: Այն թույլ է տալիս նաև գնահատել, թե արդյոք ռազմավարության մեջ արդյունավետ են կիրառվում ուժեղ կողմերը, մրցակցային առավելությունները և հնարավորությունները, արդյոք ուժեղ կողմերն օգտագործում են հնարավորություններն առավել մեծացնելու համար, որոնք են թույլ կողմերը, և ինչ փոփոխություններ պետք է իրականացնել սպառնալիքները չեզոքացնելու համար:

SWOT վերլուծությունում առկա չորս կողմերի գնահատումից հետո պետք է հասկանալ, թե ինչպես են դրանք միմյանց լրացնում և, ասենք, ինչպես է հնարավոր չեզոքացնել կամ նվազեցնել թույլ կողմերն ու սպառնալիքները, և հակառակը՝ հզորացնել ուժեղ կողմերը և հնարավորությունները: Այս համեմատությունը հնարավորություն կտա իրականացնել՝

1. գործող ռազմավարությունների վերագնահատում, համապատասխան ուղղությունների մշակում,
2. ռազմավարական պլանավորման մոդելի ներառում և արտաքին ու ներքին միջավայրի վերլուծություն,
3. մրցակցային միջավայրի գնահատում՝ ռազմավարության և մարտավարությունների մշակում արտաքին միջավայրի զարգացման տարբեր սցենարների կառուցման միջոցով:

Վերը նշված աղյուսակներից դատելով՝ Հյուսիս-Հարավ էներգամիջանցքի շուրջ ընթացող բանակցություններում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Վրաստանը, որը միաժամանակ և՛ թուլացնում, և՛ ուժեղացնում է ծրագիրն ու նրա մասնակիցներին, հիմնական խնդիրն այն է, թե ինչպես օգտագործել այդ գործոնը Հայաստանի դիրքերի ամրապնդման համար:

Վրաստանի դուրսմղում ծրագրից, ինչն առկա է Ադրբեջանի հետ համագործակցության դեպքում, թուլացնում է այդ նախագծի տարածաշրջանային նշանակությունը:

Թե՛ Իրանը և թե՛ Ռուսաստանը տվյալ ծրագրի իրականացումը դիտարկում են նաև աշխարհաքաղաքական ազդեցության տարածման հարթությունում ևս, հետևաբար՝ առանց Վրաստանի վերջիններիս համար այն դառնում է ոչ լիարժեք:

Միայն Հայաստանի հետ համագործակցությամբ վրացական գործոնը սկսում է աշխատել:

Հայաստանը ձեռք է բերում տարածաշրջանային-ռազմավարական նշանակություն Իրանի ու Ռուսաստանի համար՝ Հյուսիս-Հարավ էներգամիջանցքին ռազմավարական-տարածաշրջանային նշանակություն տալու, հատկապես Վրաստանի հետ խորքային համագործակցության առումով:

Ամփոփում

Կատարված *SWOT* վերլուծությունն ամբողջական չէ, սակայն նույնիսկ այս դիտարկման արդյունքում կարելի է նկատել կողմերի տնտեսական և քաղաքական շահերն ու ռազմավարական հեռանկարները ծրագրի իրականացման համար: Թե՛ Հայաստանը և թե՛ Ադրբեջանը պայքարում են ծրագրում առանցքային տեղ զբաղեցնելու համար, սակայն վերջինների ուժեղ ու թույլ կողմերի հաշվառմամբ կարելի է նկատել, որ իրականության մեջ ծրագրի հիմնական կողմ հանդիսացող Ռուսաստանը և Իրանը հավասարապես պետք է շահագրգռված լինեն թե՛ Ադրբեջանի և թե՛ Հայաստանի հետ աշխատելու առումով: Սակայն՝

- ծրագրում Վրաստանի ներգրավման քաղաքականության պայմաններում Հայաստանի դերը դառնում է նախընտրելի, ինչը հնարավորություն է տալիս պնդել, որ ի տարբերություն Ադրբեջանի՝ այն կարելի է կոչել հիմնական,

- Հայաստանը պետք է շեշտադրի էներգետիկ համագործակցության իր հարուստ փորձը թե՛ Ռուսաստանի և թե՛ Իրանի հետ հարաբերություններում, ինչն աննախադեպ է տարածաշրջանում,
- ներքին քաղաքական-տնտեսական կայունությունը նույնպես Հայաստանի առավելություններից մեկն է,
- էլեկտրաէներգիայի հոսքերի փոխանցման, տարանցման ու բաշխման գործընթացի կառավարման փորձը և համապատասխան տեխնոլոգիաների առկայությունը նույնպես այն առավելություններից են, ինչը շեշտում է Հայաստանի դերը:

SWOT վերլուծության համար պետք է իրականացնել շարունակական ուսումնասիրություն, ինչը հնարավորություն կտա շեշտել սկսված մրցակցության մեջ Հայաստանի ռազմավարական և մարտավարական առավելությունները, մրցակցի թույլ կողմերը և վտանգները, ինչը հիմք կհանդիսանա համապատասխան քաղաքականության մշակման համար:

ՎՐԱՍՏԱՆ-ԻՐԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ ՄԻՋԱՆՑՔԸ

Ջոնի Մելիքյան[*]

Մեծ Մերձավոր Արևելքի տարածաշրջանում աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխությունների հետ կապված՝ փոփոխությունների է ենթարկվել նաև Հարավային Կովկասի տարածաշրջանը։ Աշխարհագրական նպաստավոր դիրքում գտնվելով և երկու ծովերի (Սև և Կասպից) ու օվկիանոսի ելք ունենալով, ապահովված լինելով հումքային բազայով՝ տարածաշրջանն ունի տնտեսական զարգացման ներուժ, ինչպես նաև չլուծված էթնոքաղաքական հակամարտություններ, որոնք արգելակում են տարածաշրջանային ինտեգրումը և Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի հետագա զարգացումը։

Հարավային Կովկասը միացնում է ինչպես Հյուսիսը Հարավին, այնպես էլ Արևմուտքն Արևելքին։ Տարածաշրջանի առանցքային երկիրն առկա իրողություններում հարևան Վրաստանն է։ Հետխորհրդային շրջանի ողբերգական իրադարձությունները և ԽՍՀՄ փլուզումը հանգեցրին այն բանին, որ արդի Վրաստանը, լինելով այնպիսի երկիր, որը պահպանել է բարիդրացիական հարաբերությունները տարածաշրջանի երկրների և տարածաշրջանային խոշոր դերակատարների հետ, չհաշված Ռուսաստանի Դաշնությունը, էներգետիկ, տրանսպորտային-լոգիստիկ ճանապարհների հատման կետ է դարձել, որոնք Միջին Ասիան կապում են Եվրոպայի, իսկ Պարսից ծոցի երկրները՝ Ռուսաստանի, այնուհետև էլ՝ Արևելյան և Արևմտյան Եվրոպայի հետ։

Հայաստանի Հանրապետության համար կենսականորեն կարևոր է, որպեսզի երկիրը մեկուսացված չլինի, ինտեգրվի տարածաշրջանային նախագծերին, ընդհուպ մինչև դրանց նախաձեռնումը։ Այս առնչությամբ բավական հետաքրքիր է «Մոսկվա-Թբիլիսի-Երևան-Թեհրան» քաղաքական առանցքի ստեղծման գաղափարը։ Սակայն նշենք, որ եթե այս պահի դրությամբ կան բարիդրացիական և գործընկերային փոխհարաբերություններ առանձին վերցրած երկրների միջև՝ Վրաստան-Հայաստան, Վրաստան-Իրան, Հայաս-

[*] «Նորավանք» ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի փորձագետ։

տան-Իրան, Հայաստան-Ռուսաստան, Ռուսաստան-Իրան, ապա սա դժվար է պատկերացնել Մոսկվայի և Թբիլիսիի (որոնք 2008թ. օգոստոսյան պատերազմից հետո խզել են դիվանագիտական հարաբերությունները) ներկայիս փոխհարաբերությունների պարագայում:

Այնուամենայնիվ, ներկա պահին երկու երկրների փոխհարաբերությունները որոշակի դրական դինամիկա ունեն, ինչը կապված է բանակցային ձևաչափի գործունեության հետ, որին մասնակցում են Վրաստանի վարչապետի՝ Ռուսաստանի հետ հարաբերությունների գծով հատուկ ներկայացուցիչը և Ռուսաստանի ԱԳ փոխնախարարը (այսպես կոչված «Աբաշիձե-Կարասին» ձևաչափ): Բանակցությունների շրջանակում վերջին 3,5 տարիների ընթացքում կողմերը կարողացել են զգալիորեն բարելավել առևտրատնտեսական հարաբերությունները, իսկ ցուցանիշները քանիցս ավելացել են:

Վերը նշված գործոնը թույլ է տալիս ենթադրել, որ տեսականորեն հնարավոր է «Մոսկվա-Թբիլիսի-Երևան-Թեհրան» քաղաքական-տնտեսական առանցքի զարգացումը, որը կհենվի վերը նշված երկրների առևտրատնտեսական փոխհարաբերությունների պրագմատիկ բազայի վրա: Սակայն այս ճանապարհին կան նաև այլ նախագծեր, որոնք ավելի մրցունակ են և կարող են իրագործվել առանց Հայաստանի Հանրապետության մասնակցության: Այդ նախագծերի (էներգետիկ և տրանսպորտային-լոգիստիկ) առանցքային օղակը Իրանի Իսլամական Հանրապետությունն է, որն ընթացիկ տարվա սկզբից դուրս է եկել միջազգային պատժամիջոցներից՝ իր միջուկային ծրագրի հետ կապված, որոնք մտցվել էին 2000-ական թթ. կեսերին:

Արդեն նոր իրողություններում, հունիսի 25-ին Ադրբեջանի գծով *TRACECA* (Եվրոպա-Կովկաս-Ասիա միջազգային տրանսպորտային միջանցք) տրանսպորտային համագործակցության ծրագրի ազգային քարտուղար Ակիֆ Մուսթաֆաևը «Թրենդ» գործակալությանը տված հարցազրույցում[1] ասել էր, որ թուրքական կարճ երթուղու փոխարեն Իրանը կարող է Ադրբեջանի և Վրաստանի տարածքով Եվրոպա հասցնել տարեկան մինչև 3 մլն տոննա բեռներ: Ըստ Մուսթաֆաևի՝ այս նախագիծը «միանգամայն իրական է»: Տեղափոխության պատճառը «ահաբեկչության դեպքերի հաճախացումն է Թուրքիայի՝ Իրանին սահմանակից տարածքում»: Պաշտոնյայի խոսքով՝ Իրանի

[1] Тренд: Иран может провозить в Европу через Азербайджан до 3 млн. тонн грузов, http://www.trend.az/business/economy/2550240.html

հետ Ադրբեջանի «պատմական» համաձայնությունները (երկու երկրների երկաթուղիները միացնելու մասին, պետությունների ղեկավարների ստորագրած շրջանակային համաձայնագրերը, սահմանային Աստարաչայ գետի վրա երկաթուղային կամրջի շինարարության մասին, սահմանի երկու կողմում բեռնատերմինալների ստեղծման, ավտոմոբիլային տրանսպորտից երկաթուղային տրանսպորտ բեռները տեղափոխելու, բեռնափոխադրողներին հարկերից ազատելու մասին) իրանցի բեռնափոխադրողների համար ստեղծում են լավ պայմաններ Ադրբեջանով և Վրաստանով դեպի Եվրոպա բեռները փոխադրելու համար։

Ըստ Մուսթաֆանի՝ բեռները կարող են տեղափոխվել Ադրբեջանի և Վրաստանի տարածքով, իսկ այնտեղից էլ՝ սևծովյան նավահանգիստներով դեպի Եվրոպա։ Բացի այդ, ըստ նրա՝ արդեն Բաքու-Թբիլիսի-Կարս երկաթուղու գործարկումից հետո ապրանքները կարող են անցնել նաև Թուրքիայի տարածքով։ «Իհարկե, Իրանի համար դա երկարացնում է երթուղին, բայց հանուն բեռների անվտանգության հարկ կա դիմել նման քայլերի։ Հաշվի առնելով, որ ներկայում երկաթուղիների արդիականացման աշխատանքներ են տարվում Ադրեջանում և Իրանում, ժամանակի կորուստը կարելի կլինի փոխհատուցել ի հաշիվ գնացքների շարժման արագության մեծացման»,- նշել է պաշտոնյան։

Ավելի վաղ՝ ապրիլին, տեղի էին ունեցել Ռուսաստանի, Իրանի և Ադրբեջանի արտգործնախարարների բանակցությունները, որոնցում որոշվել է սկսել «Հյուսիս-Հարավ» տրանսպորտային միջանցքի նախագծի իրագործման առարկայական մշակումը (սա Սանկտ Պետերբուրգից մինչև Հնդկաստան, Մումբայի (Բոմբեյ) նավահանգիստներ երթուղին է՝ 7,2 հազ. կմ երկարությամբ։ Երթուղու նպատակն է՝ բեռները Հնդկաստանից, Իրանից և Պարսից ծոցի այլ երկրներից տեղափոխել ռուսական տարածք Կասպից ծովով և այնուհետև՝ դեպի Հյուսիսային և Արևմտյան Եվրոպա։ Այն պետք է Կասպիայի արևմտյան ափով Ռուսաստանից անցնի Իրան Ադրբեջանով)։ «Մենք կարծում ենք, որ այդ նախագծերի իրագործումը կարագացնի բեռների տարանցումը։ Մենք քննարկում ենք վերջին դրվագները... Կարծում ենք, որ այս համագործակցությունը ծառայում է Իրանի, Ադրբեջանի և Ռուսաստանի ժողովուրդների և, իհարկե, հենց տարածաշրջանի շահերին»,- ասել է Իրանի ԱԳՆ ղեկավար Մոհամադ Զավադ Զարիֆը։

Երթուղու շինարարությունը նախատեսվում է ավարտել 2017թ., իսկ միջազգային տրանսպորտային այս միջանցքի մասին համաձայնագիրը Ռուսաստանը, Հնդկաստանը և Իրանը ստորագրել են դեռևս 2000թ. և վավերացրել 2002թ.: Կասպիայի արևմտյան ափով ճանապարհի կառուցման համար պահանջվել է կառուցել Կազվին-Աստարա (իրանական)-Աստարա (ադրբեջանական) նոր երկաթուղին: Այն պետք է միացնի ադրբեջանական Աստարան իրանական Աստարա, Ռեշտ և Կազվին քաղաքների հետ: Կազվին-Ռեշտ երկաթուղային հատվածի շինարարությունը 2015թ. ավարտվել է, իսկ ահա Ռեշտ-Աստարա հատվածի շինարարությունը գտնվում է նախագծային փուլում: Տարբեր տվյալներով՝ երկաթուղու նախատեսված թողունակությունը կազմելու է 4-10 մլն տոննա բեռ առաջին փուլում, իսկ հետագայում պետք է հասնի մինչև տարեկան 15-20 մլն տոննայի:

Վրաց-իրանական փոխհարաբերությունները. ստատիկ վիճակից դեպի դինամիկա

Չխորանալով վրաց-իրանական փոխհարաբերությունների բազմադարյա պատմության մեջ՝ նշենք, որ վրաց-իրանական առաջին շփումները նորագույն շրջանում վերաբերում են Խորհրդային Միության փլուզման և անկախ Վրաստանի կազմավորման տարիներին: Սակայն մինչև ԽՍՀՄ փլուզումը, 1991թ. աշնանը, ոչ պաշտոնական այցով Վրաստան էր մեկնել իրանցի դիվանագետների մի խումբ, որոնք եկել էին ծանոթանալու երկրում տիրող իրավիճակին և հանդիպել էին նաև երկրի ԳԽ նախագահ Զվիադ Գամսախուրդիայի հետ: Իրանում արտաքին քաղաքական գծի կտրուկ փոփոխությունը տեղի ունեցավ երկրի նախագահի պաշտոնին Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիի ընտրությունից հետո, որի կառավարությունն անվանեցին «պրագմատիկ»: Այդ ժամանակ էլ Իրանի Իսլամական Հանրապետությունը դարձավ աշխարհի առաջին երկրներից մեկը, որը ճանաչեց Վրաստանի անկախությունը: Դա տեղի ունեցավ 1992թ. մայիսի 15-ին: Արդեն 1993թ. Վրաստանի ԳԽ նախագահ Էդուարդ Շևարդնաձեն այցելեց Իրան: Առաջին այցելության շրջանակում կողմերը ստորագրեցին 22 համաձայնագիր, որոնք վերաբերում էին գործունեության գրեթե բոլոր ոլորտներին: Այդ ժամանակ էլ՝ 1993թ., Իրանը դեսպանություն բացեց Վրաստանում, իսկ պաշտոնական Թբիլիսին պատասխան քայլի դիմեց 1994թ. վերջին:

ԻԻՀ նախագահ Ալի Աքբար Հաշեմի Ռաֆսանջանիի պատասխան այցելությունը Վրաստան տեղի ունեցավ 1995թ. ապրիլին: Ավելի ուշ՝ 2015թ., վրաց լրագրողներից մեկին տված հարցազրույցում նախկին նախագահ Ռաֆսանջանին, մեկնաբանելով Թբիլիսի կատարած իր այցը, ասել էր, որ այն ժամանակ ինքը և Շևարդնաձեն քննարկել են բազմաթիվ հետաքրքիր հարցեր, բայց «հարաբերությունների զարգացման մեջ ավելի մեծ դինամիզմ» էին ակնկալել, քան «իրականում ստացել էին»:

Առաջին իսկ տարիներից ի հայտ է գալիս այս երկու պետությունների որոշակի վարքագիծ: Վրաստանը հակախորհրդային-հակառուսական քաղաքականության ալիքի վրա կանգ է առնում արտաքին քաղաքականության եվրոպական և եվրատլանտյան վեկտորի վրա, մինչդեռ Իրանի համար նման քաղաքականությունը և Հարավային Կովկասում ոչ տարածաշրջանային դերակատարների առկայությունն ուղղակի սպառնալիք է նրա ազգային անվտանգությանը: Ելնելով այս նկատառումներից՝ Թեհրանն այս ամբողջ տարիներին վարել է պրագմատիկ և ակտիվ քաղաքականություն տարածաշրջանի երկրների և Վրաստանի հանդեպ, այնինչ Թբիլիսին ժամանակի ընթացքում էլ ավելի է շրջվել դեպի արևմտյան գործընկերները, ինչը չէր կարող չանդրադառնալ երկու երկրների միջպետական կապերի վրա:

Սակայն արդեն 2000-ական թթ. կեսերին երկու երկրների հարաբերությունները սկսեցին սառչել, չնայած պաշտոնական Թեհրանի մշտական սիրալիրություններին: Հարկ է նշել 2006 թվականը, երբ Վրաստանի համար ծայրահեղ ձմռանը Իրանն աջակցեց Վրաստանին էներգետիկ ճգնաժամի ժամանակ, որն առաջ էր եկել Ռուսաստանի հետ հարաբերությունների վատացմամբ: Անգամ 2008թ. օգոստոսյան պատերազմի արդյունքներով Թեհրանն իրեն դրսևորեց որպես կայուն գործընկեր՝ շարունակելով ճանաչել Վրաստանի տարածքային ամբողջականությունն ու հրաժարվելով ճանաչել նոր պետական կազմավորումները՝ Աբխազիան և Հարավային Օսիան (ԻԻՀ ԱԳՆ ղեկավար Մանուչեհր Մոթաքին շարունակում էր Վրաստանի հետ համերաշխության արտաքին քաղաքականությունը): Նշենք, որ արդեն 2000-ական թթ., Արևմուտքի հետ փոխհարաբերությունների վատթարացման ֆոնին, Թեհրանի քաղաքականությունը հանգեցվում էր երկու հիմնական գործոնի. Կովկասի կողմից գալիք ռիսկերի չեզոքացում, պրոակտիվ արտաքին քաղաքականություն տարածաշրջանում (արտաքին ակտորներին թույլ չտալ ներթա-

փանցել Հարավային Կովկաս) և Արևմուտքի հետ երկխոսության հաստատման փորձեր՝ Թբիլիսիի արևմտամետ ռեժիմի միջոցով։

2004-2016թթ. երկրների միջև պետությունների բարձրագույն պաշտոնատար անձանց այցելություններ չեն եղել (նախագահներ Մոհամեդ Խաթամիի, Մահմուդ Ահմադինեժադի և Հասան Ռոհանիի օրոք)։ Միջպետական հարաբերությունների որոշակի սառեցումը պայմանավորված էր նաև Վրաստանի տարածքում ԻԻՀ քաղաքացի Ամիր Հոսեյն Արդեբիլի գտնվելով և 2007թ. սեպտեմբերին նրան ԱՄՆ-ին արտահանձնելով։ Սակայն 2010թ., Միխայիլ Սաակաշվիլու օրոք, Վրաստանի ԱԳՆ ղեկավար Գրիգոլ Վաշաձեն այցելում է ԻԻՀ, և այցի շրջանակներում երկրները, իրանական կողմի նախաձեռնությամբ, 2010թ. նոյեմբերի 3-ին ստորագրում են համաձայնագիր երկու երկրների քաղաքացիների համար վիզաները հանելու մասին, որն ուժի մեջ է մտնում 2011թ. հունվարից։

Վիզային ռեժիմը հանելու գործնական նշանակությունը հասկանալու համար ներկայացնենք Վրաստանի Ազգային վիճակագրական ծառայության տվյալները, որտեղ ցույց է տրված, որ 1994-1999թթ. Վրաստան է եկել մոտ 6 հազ. իրանցի, մինչդեռ 2011-ից ամեն տարվա ամեն ամիս է երկիր եկել 6 հազ. Իրանի քաղաքացի։ Նույնը վերաբերում է նաև իրանական ներդրումներին։ Եթե 2010թ. Վրաստանում գրանցվել է 84 իրանական ընկերություն, ապա 2012թ. դրանց թիվն ավելացել է մինչև 1489-ի։ Այս ամենն ուղեկցվել է նաև երկրների միջև ապրանքաշրջանառության ավելացմամբ։ Այսպես, ԻԻՀ-ից ներմուծումը մոտ $60 մլն-ից 2010թ. վերջին ավելացել է՝ հասնելով ավելի քան $118 մլն-ի 2013թ. կեսին։ Այդ նույն ժամանակամիջոցում արտահանումը ԻԻՀ $18 մլն-ից ավելացել է՝ հասնելով մոտ $50 մլն-ի։

Սակայն միջպետական հարաբերությունների համար դժվարին դարձավ 2013 թվականը, երբ ԻԻՀ միջուկային ծրագրի «անթափանցիկության» պատճառով Արևմուտքն ուժեղացրեց պատժամիջոցներն ընդդեմ Թեհրանի, ինչին Թբիլիսին չկարողացավ հակադարձել որևէ բան (արդեն երկրի նոր ղեկավարության՝ «Վրացական երազանք» կոալիցիայի օրոք)։ Այսպիսով, պաշտոնական Թբիլիսին հուլիսի 1-ից միակողմանիորեն հրաժարվեց ԻԻՀ-ի հետ անվիզա ռեժիմից, ինչն անդրադարձավ ինչպես երկրների միջև առևտրի վրա, այնպես էլ հանգեցրեց իրանցի զբոսաշրջիկների թվի կրճատման։ *Կարևոր է նշել, որ Թեհրանը չհանեց անվիզա ռեժիմը՝ դրանով իսկ ցույց տալով իր ար-*

տաքին քաղաքականության հետևողականությունը: Վրաստանի նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլին այն ժամանակ նշում էր, որ, չնայած պաշտոնական Թբիլիսիի այդ ժեստին, Թբիլիսիի և Թեհրանի հարաբերությունները շարունակում են մնալ բարիդրացիական, և որ Իրանի քաղաքացիների համար վիզաներ մտցնելը պայմանավորված էր ՄԱԿ հանձնարարականներով: Անվիզա ռեժիմը հանելուց հետո Վրաստան այցելող իրանցիների թիվը կտրուկ նվազեց: Եթե 2013թ. սահմանը հատում էր 85,598 հազ. իրանցի, ապա 2014թ. Իրանից այցելուների թիվը կրճատվեց 44%-ով՝ 47,929 հազ. մարդ, իսկ 2015թ.՝ 70%-ով, 25,264 հազ. այցելու: Վիզային քաղաքականության պատճառով դադարեցին թռիչքները Թեհրանի և Թբիլիսիի միջև: Բացի այդ, իրանական 100 ընկերություն ստիպված էր լքել վրացական շուկան բանկային սահմանափակումների և վիզային ռեժիմի պատճառով: Հետաքրքիր է, որ Իրանից ուղղակի օտարերկրյա ներդրումները Վրաստան 2006-2015թթ. կազմել են մոտ $9,2 մլն կամ դրանց ընդհանուր թվի 0,1%-ը (կտրուկ անկում 2013-2015թթ.):

Միջպետական հարաբերությունների համար բեկումնային դարձավ 2015թ. կեսը, երբ հուլիսի 14-ին ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Չինաստանը, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Եվրամիությունը և Իրանը պայմանավորվեցին Գործողությունների համատեղ համապարփակ ծրագրի մասին (ԳՀՀԾ կամ «Իրանական համաձայնագիր»)՝ նպատակ ունենալով վերջ դնել դիմակայությանը Թեհրանի միջուկային ծրագրի շուրջ: Իրանը համաձայնեց նաև ինքնակամ կիրառել համաձայնագրի Լրացուցիչ արձանագրությունը ԱԷՄԳ երաշխիքների մասին, որը թույլ է տալիս կազմակերպությանը մոնիթորինգի լրացուցիչ հնարավորություններ մտցնել ԻԻՀ ատոմային օբյեկտներում: Այս փաստաթուղթը վավերացվել է ԻԻՀ մեջլիսի կողմից 2015թ. հոկտեմբերին, ինչից հետո սկսվել է ԻԻՀ-ի դեմ միջազգային պատժամիջոցների հանման գործընթացը՝ կապված նրա միջուկային ծրագրի հետ: Հարցը վերջնականապես լուծվեց 2016թ. հունվարի 16-ին ԱԷՄԳ զեկույցի հրապարակումից հետո:

Այսպես կոչված Մոսկվա-Թբիլիսի-Երևան-Թեհրան առանցքի միջպետական ձևաչափի՝ ներկա պահին առկա ձեռքբերումների մեջ հարկավոր է նշել Հյուսիս-Հարավ էներգետիկ միջանցքի շինարարության «ճանապարհային քարտեզը»՝ ստորագրված Երևանում ս.թ. ապրիլի 13-ին, Հայաստանի, Ռուսաստանի, Իրանի էներգետիկայի նախարարների և Վրաստանի էներգե-

տիկայի փոխնախարարի կողմից։ Մեկնաբանելով այս փաստաթղթի ստորագրումը՝ Վրաստանի էներգետիկայի և բնական պաշարների նախարար Կախա Քալաձեն ասել է, որ Իրանը բավական կարևոր շուկա է, մանավանդ նրա հանդեպ պատժամիջոցները հանելուց հետո, և Վրաստանը պետք է առավելագույնս օգտագործի այդ երկրի ռեսուրսներն ու հնարավորությունները։

Հայաստանի էներգետիկայի փոխնախարար Արեգ Գալստյանի խոսքերով՝ «ճանապարհային քարտեզը» ձևակերպում է այն գործողությունները, քայլերը և ծրագրերը, որոնք պետք է իրականացվեն մինչև 2019թ., երբ ֆիզիկապես կգործարկվի Հյուսիս-Հարավ էներգետիկ միջանցքը։ Բացի այդ, նշվել է, որ փաստաթուղթը նախատեսում է անհրաժեշտ իրավական համաձայնագրեր, աշխատանքների կատարման գրաֆիկներ և ժամկետներ, ինչը թույլ կտա կազմակերպել բոլոր ցանցերի համատեղ աշխատանքը և ապահովել դրանց բեռնվածությունը։ Ծրագրի շրջանակում Հայաստանի և Իրանի միջև արդեն իրականացվում է էլեկտրահաղորդագծերի շինարարություն՝ իրանական կողմի ֆինանսավորմամբ, ինչպես նաև բարձրավոլտ ԷՀԳ է անցկացվում Հայաստանի և Վրաստանի միջև *KfW* բանկի վարկային միջոցներով։ Նախատեսվում է, որ Հյուսիս-Հարավ միջանցքի լիարժեք թողարկումից հետո դրա հզորությունը կհասնի 1000 մվտ-ի։ Վրաստանի էներգետիկայի նախարարի խոսքերով՝ Հայաստանի կողմից նոր էլեկտրահաղորդագծերի և ենթակայանի շինարարության նախագծի աշխատանքն ավարտելուց հետո, 2017թ., Վրաստանը կկարողանա ներդրողներին հնարավորություն տալ իրականացնելու էլեկտրաէներգիայի առևտուր ոչ միայն Թուրքիայի, այլև Իրանի հետ՝ Հայաստանի միջոցով։

ԻՐԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ-ՎՐԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ռոման Կարապետյան *

Արդի միջազգային քաղաքական գործընթացներում տարածաշրջանային ինտեգրացիոն բազմակողմ հարթակներն ամենաարագ զարգացող ուղղություններն են, որոնք վաղուց ապացուցել են իրենց արդյունավետությունը: Մերձկասպյան-սևծովյան տարածաշրջանում արդեն երկու տասնամյակ գործում է այդպիսի համագործակցության հարթակ՝ ի դեմս Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան առանցքի: Սկզբում որպես տնտեսական, իսկ այժմ՝ նաև քաղաքական ու ռազմական համագործակցության ձևաչափեր ընդգրկող Արևելք-Արևմուտք ուղղությամբ գործող այս հարթակը բավական արագ զարգանում է՝ առաջացնելով տարածաշրջանի և նրա հարևան երկրների անհանգստությունը: Գաղտնիք չէ, որ այն ուղղակիորեն վնասում է Ռուսաստանի տարածաշրջանային տնտեսաքաղաքական շահերին, ուղիղ ծայրով ուղղված է Հայաստանի դեմ, իսկ տարածաշրջանում թյուրքական գործոնի ակնհայտ մեծացումն անխուսափելիորեն շարժում է պաշտոնական Թեհրանի նյարդերը:

Այս պայմաններում ավելի արդիական ու հրատապ է դառնում տարածաշրջանային նոր առանցքի ձևավորման հարցը, որի հիմնական թիրախային կողմեր են դիտարկվում Իրանն ու Ռուսաստանը, իսկ Հայաստանն ու Վրաստանն առավելապես դիտարկվում են որպես տարանցիկ կամ միջանկյալ կողմեր: Ակնհայտ է, որ Իրան-Հայաստան-Վրաստան-Ռուսաստան առանցքում գլխավոր գործող անձինք լինելու են նշված երկու պետությունները, որոնք ունեն բավարար ռեսուրսներ և ներուժ՝ ձևավորելու այս հարթակը: Թեպետ այս ձևափաչով տարածաշրջանային համագործակցության ձևավորման վերաբերյալ և՛ Թեհրանում, և՛ Մոսկվայում բազմիցս է խոսվել դեռևս 1990-ական թվականներից, սակայն այդ ուղղությամբ իրական քայլեր չեն ձեռնարկվել:

---

* ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դասախոս, պ.գ.թ.:

Կողմերի շահերը, հիմնական նպատակներն առանցքի ձևավորման շուրջ

Մեր կարծիքով, այս առանցքի ձևավորմամբ շահագրգռված հիմնական երկրներից մեկն Իրանն է, որը կարող է դառնալ վերջինիս հիմնական շարժիչ ուժը: Իրանը, լինելով էներգետիկ ռեսուրսներով հարուստ պետություն, առաջին հերթին այլընտրանքներ փնտրելու խնդիր ունի էներգակիրների շուկաների բազմազանության առումով: Մյուս կողմից՝ Իրանը խնդիր ունի բարելավել դեպի Եվրոպա և հակառակ ուղղությամբ հաղորդակցության ուղիները, իսկ այս առանցքը կարող է հիանալի հնարավորություններ ստեղծել սևծովյան նավահանգիստներով այս ուղղությամբ դուրս գալու տեսանկյունից: Փաստորեն, այս առանցքը կարող է լավ հիմքեր նախապատրաստել Իրանի համար հետագայում Իրան-Կովկաս-Եվրոպա համագործակցության հարթակի և նույն ուղղությամբ էներգետիկ ու տրանսպորտային հաղորդակցության ուղիների զարգացման համար:

Հայաստանի Հանրապետությունը, գտնվելով տնտեսական շրջափակման մեջ, այս առանցքի ձևավորման հիմնական շահագրգիռ կողմերից մեկն է: Գաղտնիք չէ, որ առանցքի բոլոր երեք երկրների հետ հարաբերություններն ունեն ռազմավարական նշանակություն Հայաստանի համար: Եթե Վրաստանը հիմնականում ունի տնտեսական նշանակություն, ապա Իրանի և Ռուսաստանի պարագայում դրանք ունեն նաև ամուր քաղաքական կողմեր, իսկ Ռուսաստանի դեպքում՝ նաև ռազմական բաղադրիչներ: Համագործակցության այս հարթակի ձևավորումը թույլ կտա Հայաստանին ոչ միայն դուրս գալ տարածաշրջանային մեկուսացումից, այլև քաղաքական որոշակի խնդիրներ լուծել:

Ռուսաստանը Հայաստանի ամենախոշոր տնտեսական գործընկերն է, որի հետ առևտրաշրջանառության ծավալները վերջին տարիներին հասնում են մինչև $1,4 մլրդ-ի: Չնայած Հայաստանի հետ առևտրաշրջանառության բավական համեստ ծավալներին[1]՝ Իրանի Առևտրի զարգացման կազմակերպությունը Հայաստանը դիտարկում է որպես առաջնահերթ առևտրային գործընկեր[2]: Երկու երկրները համագործակցության բավական զարգացած տեմպեր ունեն էներգետիկ և հաղորդակցության ոլորտներում: Գործում է Իրան-Հայաստան բարձրավոլտ էլեկտրահաղորդակցության երկու գիծ, ներկայում կա-

[1] Հայաստանի և Իրանի միջև առևտրաշրջանառության ծավալները մեծ չափեր են ընդունել 1990-ական թթ. երկրորդ կեսին՝ հասնելով մինչև $400 մլն-ի: 2000-ականների սկզբներին գրանցվել է որոշակի անկում, իսկ վերջին տարիներին արդեն վերականգնվել է նախկին բարձր ցուցանիշը:

[2] Իրանն առևտրային հարաբերություններ ունի աշխարհի 200 երկրների հետ, որոնցից միայն 40-ին է դիտարկում որպես առաջնային շուկաներ կամ գործընկերներ:

ռուցվում է նաև երրորդը: Արաքս գետի վրա կառուցվել է համատեղ հիդրոէլեկտրակայան, այժմ կառուցման փուլում է երկրորդ՝ ավելի հզոր թողունակությամբ նոր կայանը: Գործում է Իրան-Հայաստան գազատարը: Շատ են նաև դեռևս կյանքի չկոչված ծրագրերն ու չիրացված հնարավորությունները: Դրանց շարքին առաջին հերթին կարելի է դասել Իրան-Հայաստան երկաթգծի կառուցման ծրագիրը, որի շուրջ քննարկումները մեկնարկել են դեռևս 1995 թվականից: Մյուսը Թավրիզ-Մեղրի նավթամուղի և Մեղրիում նավթավերամշակման գործարանի կառուցման ծրագիրն է: Համոզված ենք, որ այս նախագծերի իրագործման դեպքում ոչ միայն կմեծանար Հայաստանի նշանակությունը տարածաշրջանում, այլ նաև ավելի մեծ հնարավորություններ կստեղծվեին քննարկվող առանցքի ձևավորման համար: 2015թ. Եվրասիական տնտեսական միություն մուտք գործելուց հետո պաշտոնական Երևանը նաև մշտապես առաջարկել է, որպեսզի կառույցն ազատ առևտրային հարաբերություններ ձևավորի Իրանի հետ: Այս գաղափարի իրագործման դեպքում բավական լայն հնարավորություններ կբացվեն Հայաստանի համար, քանի որ այն Իրանի և ԵԱՏՄ երկրների միջև միակ ցամաքային կապող օղակն է:

Վրաստանը, օգտագործելով իր աշխարհագրական դիրքն ու տարածաշրջանում ստեղծված քաղաքական դրությունը, հայտնվել է առավել բարենպաստ իրավիճակում: Վրաստանի տարանցիկ նշանակությունն Արևելք-Արևմուտք էներգետիկ և տրանսպորտային հաղորդակցության ծրագրերում շատ մեծ է: Չնայած Վրաստանն իր արտաքին քաղաքականության մեջ ընտրել է զարգացման արևմտյան ճանապարհը, փորձել է լավ հարաբերություններ ձևավորել նաև տարածաշրջանային ուժային կենտրոնների, այդ թվում՝ Իրանի հետ: Երկու երկրների միջև տնտեսական հարաբերությունների զարգացման հիմնական խոչընդոտն ընդհանուր սահմանի բացակայությունն է: Նրանց միջև կապը հիմնականում իրականացվում է Թուրքիայի տարածքով, ինչը լրացուցիչ բարդություններ է ստեղծում: Վրաստանի և Իրանի միջև առևտրաշրջանառությունն ամենաբարձր ծավալներին հասել է 1990-ականների կեսերին, սակայն երկրորդ կեսից արդեն գրանցվել է կտրուկ նվազում՝ մոտենալով $10 մլն-ի շեմին: Դա պայմանավորված էր նախ Վրաստան-Թուրքիա, Վրաստան-Ադրբեջան համագործակցության զարգացմամբ և հետո՝ Վրաստանի արևմտյան կողմնորոշման խորացմամբ:

Տարածաշրջանում Հայաստանն ու Վրաստանն ունեն մեկ հիմնական ընդհանրություն. երկուսն էլ կախում ունեն արտաքին էներգակիրներից:

Վրաստանն արտադրում է իր էներգետիկ պահանջների ընդամենը 18%-ը: Էներգետիկ ոլորտում Իրան-Հայաստան-Վրաստան եռակողմ ձևաչափով համագործակցության փորձեր արվել են դեռևս 1990-ականներից: Իրան-Հայաստան գազամուղի կառուցման քննարկումների ժամանակ վրացական կողմը չէր բացառում, որ կարող է դրան միանալ, սակայն արդեն 2000թ. Վրաստանը գազի ներմուծման վերաբերյալ երկարաժամկետ պայմանագիր կնքեց Ադրբեջանի հետ: 2006թ. ձմռանը, երբ վթարի հետևանքով երկար ժամանակով շարքից դուրս եկավ Ռուսաստանից Վրաստան եկող գազամուղը, Վրաստանն իր գազի պահանջները բավարարեց Իրանից ներկրման միջոցով: Հունվարին Վրաստանի նախագահ Սաակաշվիլին հայտարարեց, որ Վրաստանը հետաքրքրություն է ցուցաբերում Իրան-Հայաստան նոր գազատարին միանալու հարցում՝ նույնիսկ առաջարկելով դրա ծավալներն ընդլայնել ու այդ ուղով գազ արտահանել Եվրոպա: Այս ծրագրի իրագործման համար առաջ եկան տնտեսական ու քաղաքական խնդիրներ: Վրաստանն առաջարկում էր ծրագրի իրագործման ֆինանսական հարցերը լուծել արտաքին ներդրումների հաշվին, մինչդեռ Իրանը դեմ էր դրան: Մյուս կողմից՝ Իրանը գտնվում էր Արևմուտքի տնտեսական պատժամիջոցների ներքո, և դժվար է պատկերացնել, թե ինչպես Սաակաշվիլին կհամարձակվեր մինչև վերջ դեմ գնալ արևմտյան շահերին՝ իր երկրի արտաքին քաղաքականության առջև ունենալով արևմտյան ինտեգրացիայի ուղին: 2016թ. վաղ գարնանը Վրաստանը, Իրանն ու Հայաստանը մոտ էին Իրան-Հայաստան-Վրաստան գազատարի կառուցման շուրջ վերջնական համաձայնության ձեռքբերմանը, սակայն վերջնական համաձայնությունը չկայացավ Վրաստանի և Ադրբեջանի միջև գազի մատակարարման վերաբերյալ նոր պայմանագրի ստորագրման պատճառով:

Կարծում ենք, որ համագործակցության այս հարթակի ձևավորումը Ռուսաստանի համար կարող է ունենալ առավելապես քաղաքական նշանակություն: Նախ՝ դրանով կթուլանա տարածաշրջանում Թուրքիայի ազդեցությունը, որի փոխարեն կմեծանա ռուսական գործոնը: Ռուսաստանն ունի բավական ջերմ հարաբերություններ Իրանի հետ, սակայն դրա տնտեսական կողմը թույլ է: 2014թ. երկրորդ կեսից նկատվեց որոշակի ակտիվություն, որոնք ուղղված էին տնտեսական կապերի զարգացմանը: Մասնավորապես, նախատեսվում է տասնապատկել առևտրաշրջանառության ծավալները՝ ներկա $1,5 մլրդ-ից հասցնելով 15 մլրդ-ի: Սակայն փաստ է, որ մինչև այժմ լուրջ տեղաշարժեր Իրան-Ռու-

սաստան տնտեսական հարաբերություններում չեն գրանցվել: Կարծում ենք, որ քննարկվող առանցքով համագործակցության զարգացումը կարող է նոր իմպուլսներ հաղորդել նրանց միջև համագործակցության զարգացմանը:

Համագործակցության արդի վիճակը

Դժվար է պնդել, որ առաջարկվող ձևաչափով համագործակցությունն ունի մոտ ապագայում զարգանալու մեծ հեռանկարներ, սակայն մյուս կողմից՝ կան որոշակի հիմքեր դրա դինամիկ զարգացման համար: Ներկայում գործում են Իրան-Հայաստան, Իրան-Վրաստան, Իրան-Ռուսաստան, Հայաստան-Վրաստան, Հայաստան-Ռուսաստան երկկողմ և Իրան-Հայաստան-Վրաստան, Իրան-Հայաստան-Ռուսաստան եռակողմ համագործակցության որոշակի ծրագրեր ու մեխանիզմներ: Առաջարկվող առանցքի ձևավորման համար կարևոր է, որ համագործակցության առկա երկկողմ և եռակողմ ձևաչափերը դառնան քառակողմ: Իհարկե, ներկայում կան նաև քառակողմ համագործակցության պայմանագրեր, սակայն դրանք ընդգրկում են քիչ ոլորտներ և ուղղություններ: Մասնավորապես, 2015թ. դեկտեմբերին Երևանում Հայաստանի, Իրանի, Ռուսաստանի և Վրաստանի միջև ստորագրվել է էներգետիկ համագործակցության վերաբերյալ փոխըմբռնման հուշագիր: Նախատեսվում է մինչև 2018թ. Հայաստան-Վրաստան 400 կվտ հզորությամբ էլեկտրահաղորդագիծ կառուցել: Նախատեսված է նաև մինչև 2021թ. էլեկտրաէներգիայի փոխադարձ հոսքերի հզորությունը հասցնել մինչև 700 մվտ: Ընթացիկ տարվա ապրիլի կեսերին Երևան ժամանեց Իրանի էներգետիկայի նախարար Համիդ Չիթչիանի գլխավորած պատվիրակությունը: Երևանում Հայաստանի, Ռուսաստանի և Վրաստանի էներգետիկ ոլորտի պատասխանատուների հետ ստորագրվել է ոլորտում համագործակցության վերաբերյալ քառակողմ համաձայնագիր: Կազմվել է այս չորս երկրների էներգահամակարգերը միավորող ծրագրերի իրականացման ճանապարհային քարտեզը:

Առանցքի ձևավորման հիմնական խոչընդոտները և արտաքին գործոնները

Կարծում ենք՝ այս առանցքի ձևավորման հիմնական խոչընդոտները կապվում են վրացական գործոնի հետ: Վրաստանը լուրջ հայտ է ներկայացրել Եվրամիությանն ու ՆԱՏՕ-ին անդամակցելու հարցում, ուստի վերջինս չի ցանկանա սրել հարաբերություններն Իրանի նկատմամբ ոչ բարյացակամ տրամադրված արևմտյան մի քանի պետությունների հետ, որոնք վճռորոշ ձայնի իրավունք ունեն

այս կառույցներում: Վրաստանի ՆԱՏՕ մուտք գործելը կարող է ինչպես լրջորեն վնասել Իրանի աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական շահերին, այնպես էլ խառնել խաղաթղթերը տարածաշրջանում: Ինչպես ԱՄՆ-ին, այնպես էլ տարածաշրջանում նրա հիմնական ռազմաքաղաքական գործընկեր Թուրքիային ձեռնտու չեն Իրանի դիրքերի ամրապնդումն ու մեծացումը տարածաշրջանում: Իսկ որ այս առանցքի ձևավորումը կտանի դրան՝ դժվար չէ պատկերացնել: ԱՄՆ քաղաքականությունը տարածաշրջանում հասկանալու համար բավական է մեջբերել նախկին ԽՍՀՄ երկրների հետ ԱՄՆ ռազմավարության մշակող Ստրոուբ Թելբոթի՝ 1998թ. ԱՄՆ Կոնգրեսում Հարավային Կովկասի մասին ելույթից մի հատված. «Մենք շարունակում ենք տարածաշրջանի երկրներին հետ պահել Իրանի հետ սերտ կապեր զարգացնելուց: Ավելին, մենք թույլ չենք տա տարածաշրջանի որևէ երկրի այնտեղ քաղաքական կամ տնտեսական հեգեմոն դիրքեր զբաղեցնել: Մենք կշարունակենք աշխատել Կովկասի բոլոր երկրների հետ, որպեսզի կանխենք Իրանի ազդեցության աճը տարածաշրջանում»:

Մյուս հիմնական խոչընդոտն այն է, որ առանցքի երկրներից Ռուսաստանի և Վրաստանի միջև կան քաղաքական տարաձայնություններ: 2008թ. վրաց-հարավօսական պատերազմից հետո մինչ օրս սառեցված են այս երկրների միջև դիվանագիտական հարաբերությունները:

Փաստորեն, եթե նախկինում և՛ Հայաստանի, և՛ Վրաստանի ու Ռուսաստանի ձեռքերն ինչ-որ թելերով կապված էին, ապա այժմ այդ մասով խոչընդոտները վերացված են: Ներկայում լավ հնարավորություն է ստեղծվել զարգացնել առկա համագործակցությունը, այն դնել որակապես նոր հարթության վրա: Մեր կարծիքով՝ այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ հիմնական քայլերն են.

- կարգավորել քաղաքական տարաձայնությունները Ռուսաստանի և Վրաստանի միջև,
- նախատեսվող ժամկետներում կյանքի կոչել առկա պայմանավորվածությունները,
- գործարկել աբխազական երկաթուղին, ինչը նոր ազդակ կհաղորդի առանցքի երկրների միջև առևտրաշրջանառության զարգացմանը,
- կյանքի կոչել Իրան-Հայաստան երկաթգծի կառուցման ծրագիրը,
- զարգացնել Հայաստանի քաղաքական հարաբերություններն Իրանի ու Վրաստանի հետ,
- զարգացնել Իրան-Հայաստան-Ռուսաստան համագործակցության առանցքը:

ՆԱՎԹԻ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Արմեն Մանվելյան[*]

2014թ. սեպտեմբերից նավթի գների շարունակական անկումը հանգեցրել է Մեծ Մերձավոր Արևելքում աշխարհաքաղաքական և աշխարհառազմավարական իրավիճակի կտրուկ փոփոխման, ինչն իր հերթին խորացրել է տարածաշրջանում առկա ճգնաժամերը և հանգեցրել ռազմաքաղաքական հավասարակշռության փոփոխության: Նավթով և գազով հարուստ տարածաշրջանների և պետությունների անվտանգային դինամիկան էականորեն կախված է նավթի ու գազի գնագոյացման մեխանիզմներից և դրանց վրա ազդելու իրենց ընդունակությունից, հետևաբար դրա ուսումնասիրությունը կարևոր է՝ հասկանալու համար գների փոփոխման պատճառները:

Նախ պետք է շեշտել այն գործոնները, որոնք առաջնահերթ ազդում են նավթի գնագոյացման վրա: Դրանք են՝

1. տնտեսական,
2. աշխարհաքաղաքական,
3. բորսային կամ սպեկուլյատիվ,
4. դոլարային:

Գնագոյացման վրա ազդում են այլ գործոններ ևս, օրինակ՝ բնակլիմայական փոփոխությունները, տեխնոլոգիաների զարգացումը, վերականգնողական և միջուկային էներգետիկան և այլն, սակայն այսօր կանգ կառնենք նշված չորս գործոնի վրա:

Նշենք, որ նավթի գնի ձևավորումը բավական բարդ գործընթաց է, որտեղ մեծ է մի շարք գործոնների համընկնման դերը, ինչն էլ հանգեցնում է այն բանին,

---

[*] Արևելագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող, էներգետիկ աշխարհաքաղաքականության և միջազգային անվտանգության հարցերով մասնագետ, պ.գ.թ.:

որ նավթի գների կանխատեսումը դժվարանում է, ինչի պատճառով էլ շատերն այն համարում են քառտիկ: Սակայն իրականում այստեղ կա հստակ տրամաբանություն. դրա հաշվարկը բարդ, սակայն հնարավոր գործողություն է:

Առաջին գործոնը *տնտեսականն* է: Ինչպես և ցանկացած ապրանք, նավթի գինը ձևավորվում է շուկայում պահանջարկի և առաջարկի հաշվեկշռի արդյունքում: Հասկանալի է, որ առաջարկի ավելացման դեպքում գինը նվազում է, իսկ պահանջարկի ավելացման դեպքում՝ բարձրանում: Նավթի գնի փոփոխությունը՝ դրա բարձրացումը, վերջին տասնամյակում պայմանավորված է այսպես կոչված չինական ֆենոմենով: Չինաստանի տնտեսության անանախադեպ աճը, որը սկսվեց անցած դարի 90-ականներին, հանգեցրեց նավթի պահանջարկի կտրուկ ավելացման:

Չինաստանը, որն ինքը նավթ արտահանող պետություն էր, ստիպված էր դեռ անցած դարի 90-ական թվականների վերջին դադարեցնել նավթի արտահանումը սեփական ավելացող կարիքները բավարարելու համար: Սա էլ իր հերթին հանգեցրեց նավթի պահանջարկի կտրուկ աճի միջազգային շուկայում և, որպես արդյունք, նավթի գնի թանկացման: Եվ եթե 2000թ. նավթի մեկ բարելի արժեքը մոտ $22 էր, ապա 2008թ. այդ գինը հասավ $146-ի:

Նավթի գնի անկման պատճառներից մեկը ևս չինական գործոնն էր: 2010թ. սկսվեց Չինաստանի տնտեսության աճի դանդաղումը, ինչն էլ 2014թ. աշնանը հանգեցրեց նավթի պահանջարկի նվազման և գների անկման:

Նավթի գնի անկման մյուս «մեղավորը» Ամերիկայի Միացյալ Նահանգներն է, որը, լինելով նավթ սպառող աշխարհի խոշորագույն պետություններից մեկը, վերջին մի քանի տարիների ընթացքում կտրուկ փոխել է դիրքը՝ այդ շուկայում դառնալով նավթի ամենախոշոր արդյունահանող: Եթե 2010թ. ԱՄՆ-ը բավարարում էր նավթի իր պահանջարկի միայն 63%-ը, իսկ մնացած 37%-ը ներմուծում միջազգային շուկայից, ապա 2014թ. ԱՄՆ-ը սկսեց բավարարել իր պահանջարկի արդեն 94%-ը՝ կտրուկ նվազեցնելով նավթի ներմուծումը: ԱՄՆ-ը նման արդյունքի հասավ թերթաքարային նավթի պաշարների արդյունահանման ծավալների կտրուկ աճի շնորհիվ: 2014թ. նավթի արդյունահանման ծավալներով ԱՄՆ-ը առաջ անցավ Սաուդյան Արաբիայից և Ռուսաստանից: Սա հանգեցրեց նրան, որ նավթի համաշխարհային շուկայում «ավելորդ» նավթ հայտնվեց, և նավթի առաջարկը սկսեց գերազանցել պա-

հանջարկը մոտ 2 մլն բարել օրական ծավալով[1]: Այս պայմաններում նավթի գինը 2014թ. երկրորդ կեսին նվազեց $110-ից մինչև $70-80-ի: Սակայն այս գինն էլ երկար չպահպանվեց, քանի որ Իրանի նկատմամբ պատժամիջոցների վերացումը և վերջինիս վերադարձը նավթի համաշխարհային շուկա էլ ավելի նվազեցրին ածխաջրածնի գները՝ հասցնելով մինչև $50-ի: Սակայն նավթի գները շարունակեցին նվազել նաև 2015թ. վերջին օրերին և 2016թ. առաջին ամիսներին՝ տատանվելով $25-40-ի սահմաններում, հատկապես երբ ԱՄՆ Կոնգրեսը չեղարկեց հում նավթի արտահանման արգելքը[2]: Հիշեցնենք, որ 1975թ. ԱՄՆ Կոնգրեսը որոշում էր ընդունել արգելել հում նավթի և գազի արտահանումը՝ դրանք պահելով որպես ռազմավարական պաշարներ: Սակայն թերթաքարային նավթի ի հայտ գալը փոխել է իրավիճակը, և այսպիսով ԱՄՆ-ը ցանկանում է ազատվել նավթ արդյունահանող հիմնական պետությունների ազդեցությունից և թելադրում է խաղի իր կանոնները:

ԱՄՆ այս քաղաքականությունն առաջին հերթին հարվածում է նավթի խոշոր արդյունահանողների՝ Սաուդյան Արաբիայի և Ռուսաստանի շահերին: Իհարկե, տուժում են նավթ արդյունահանող բոլոր պետությունները և հատկապես նրանք, որոնց նավթի արդյունահանման ինքնարժեքը բավական բարձր է, օրինակ՝ Վենեսուելան, Կանադան և Ադրբեջանը:

2016թ. գարնանը նավթի գնի բարձրացումը մինչև $50-ի սահմաններում պայմանավորված էր առաջին հերթին ԱՄՆ-ում թերթաքարային նավթի արդյունահանման ծավալների անկմամբ: Նավթի ցածր գները հանգեցրին թերթաքարային նավթի արդյունահանման կրճատմանը, նվազումը կազմեց օրական մոտ 1 մլն բարել, ինչն էլ նավթի գինը բարձրացրեց ներկայիս $45-50-ի սահմանին:

Նավթի գնագոյացման գործում կարևոր է նաև *աշխարհաքաղաքական* գործոնը: Գաղտնիք չէ, որ նավթի պաշարները հավասարապես չեն բաշխված երկրագնդի վրա, դրանք հիմնականում կենտրոնացած են Պարսից ծոցում, Հյուսիսային Աֆրիկայում, Կենտրոնական Ամերիկայում և ևս մի քանի տարածաշրջաններում:

Այստեղ, թերևս, կարևոր է հատկապես Պարսից ծոցը, որտեղ կենտրոնացված է համաշխարհային նավթի մոտ 45%-ը: Սա նշանակում է, որ քաղա-

[1] BP Statistical Review of World Energy, June 2015, https://www.bp.com/content/dam/bp/pdf/energy-economics/statistical-review-2015/bp-statistical-review-of-world-energy-2015-full-report.pdf

[2] America lifts its ban on oil exports, http://www.economist.com/news/finance-economics/21684531-light-sweet-compromise-puts-end-crude-market-distortions-america-lifts

քական անկայունությունը կամ կայունությունը նշված տարածաշրջաններում կարող են ազդել նավթի գնագոյացման վրա՝ հանգեցնելով դրա բարձրացմանը կամ նվազմանը:

Սա հատկապես պարզ երևում է, երբ համեմատում ենք նավթի գնի տատանումը և ռազմական գործողությունները Պարսից ծոցում և Մերձավոր Արևելքում: Ցանկացած ռազմական բախում, ճգնաժամ կամ հեղաշրջում այս տարածաշրջանում հանգեցնում էր նավթի գնի բարձրացմանը միջազգային բորսաներում:

ՕՊԵԿ անդամ պետությունները շատ անգամ փորձել են այս գործոնն օգտագործել Արևմուտքի վրա ճնշում գործադրելու համար, հատկապես իսրայելա-արաբական պատերազմների ժամանակ, և այդպիսի 11 փորձերից, թերևս, հաջողվեց միայն մեկը՝ 1973թ., երբ Պարսից ծոցի պետությունների կողմից դեպի Արևմուտք նավթի առաքման դադարեցումը հանգեցրեց նավթի գնի կտրուկ բարձրացման՝ $2.9-ից մինչև $11.65 մեկ բարել նավթի դիմաց[3]:

Այս իրադարձությունից հետո ԱՄՆ-ում և Եվրոպայում սկսեցին մշակել էներգետիկ աշխարհաքաղաքականության և էներգետիկ անվտանգության նոր հայեցակարգեր և ռազմավարություններ, ինչն էլ ժամանակի ընթացքում հանգեցրեց Պարսից ծոցի էներգետիկ աշխարհաքաղաքական նշանակության նվազմանը: Այս մշակումներում կարևորվում էր երկու ուղղություն. առաջինը ընդհանուր էներգետիկ շուկայում, չնայած դրա շարունակական աճին, նավթի տեսակարար կշիռի նվազեցումն էր (եթե 2000թ. էներգետիկ շուկայի 60%-ը կազմում էր նավթը, ապա 2010թ. այն ընդամենը 40% էր):

Երկրորդ ուղղությունը թերթաքարային նավթի և գազի մշակումներն էին, որի առաջատարը ԱՄՆ-ն է: Թերթաքարային հեղափոխությունն էականորեն փոխեց աշխարհառազմավարական վիճակը նավթի շուկայում և հանգեցրեց Պարսից ծոցի ու Մերձավոր Արևելքի դերի նվազմանը նավթի գնագոյացման գործընթացում: Այս տարածաշրջաններին փոխարինելու եկավ Հյուսիսային Ամերիկան՝ ԱՄՆ-ը և Կանադան:

Բորսային կամ սպեկուլյատիվ գործոն. նավթի գինը ձևավորվում է բորսաներում, հիմնականում՝ Լոնդոնի ու Նյու Յորքի, և որպես դասական բորսայական ապրանք այստեղ մեծ է նաև սպեկուլյանտների դերը, որոնք, խաղալով գնի բարձրացման կամ անկման վրա, հսկայական եկամուտներ են ստանում:

[3] Oil Shock of 1973–74, http://www.federalreservehistory.org/Events/DetailView/36

Բորսաներում վաճառվում է ոչ թե նավթ, այլ այսպես կոչված ապագայի պայմանագրեր՝ ֆյուչերսներ (*futures contract*), որոնք նախանշում են նավթի գինը մեկ կամ երկու ամիս առաջվա համար: Օրինակ, հուլիսի 11-ին Լոնդոնի բորսայում վաճառվում են ֆյուչերսներ 2016թ. սեպտեմբեր ամսվա համար՝ մեկ բարել բրենթ (*Brent Crude*) տեսակի նավթը մոտ $47 գնով: Նյու Յորքի բորսայում արդեն *WTI* (*West Texas Intermediate*) տեսակի նավթը 2016թ. օգոստոս ամսվա համար վաճառվում է մոտ $45-ով[4]:

Այսինքն՝ հենց այս ֆյուչերսների վաճառքով զբաղվող բրոքերներն (ցուլեր և արջեր) էլ ձևավորում են նավթի գինը՝ փորձելով գումարներ վաստակել նավթի գների նվազեցման կամ բարձրացման հաշվին: Այդ ֆյուչերսային պայմանագրերը երբեք էլ իրական նավթի չեն վերածվում, դրանք որպես արժեթղթեր ձեռքից ձեռք են անցնում և մի քանի անգամ վերավաճառվում՝ պայմանավորված նավթի նկատմամբ հետաքրքրության աճով կամ նվազմամբ: Հասկանալի է, որ այստեղ մեծ է սպեկուլյատիվ գործոնի դերը, և այնպիսի հայտնի սպեկուլյանտ, ինչպիսին, օրինակ, Ջորջ Սորոսն է, իր ակտիվությամբ կարող է նվազեցնել կամ բարձրացնել նավթի գինը: Սակայն պետք է շեշտել, որ սպեկուլյատիվ-բորսային գործընթացը նավթի գնագոյացման վրա երկարատև ազդեցություն ունենալ չի կարող, այն ունենում է կարճաժամկետ ազդեցություն:

Նավթի գների ձևավորման այս մեխանիզմը միշտ չէ, որ արտահայտում է նավթի շուկայում պահանջարկի և առաջարկի իրական պատկերը, այն շատ դեպքերում կարող է հակառակ տրամաբանությամբ աշխատել: Միաժամանակ, բորսաները զգայուն են նավթ արդյունահանող և սպառող հիմնական պետություններում տեղի ունեցող տնտեսական և քաղաքական փոփոխությունների հանդեպ և կարող են ազդել նավթի գնի վրա՝ նշված երկրներից դրական կամ բացասական տեղեկատվության տարածման պայմաններում:

Նավթի գնի ձևավորման նման գործընթացի դեմ միշտ էլ պայքարել են նավթ արդյունահանող պետությունները՝ Սաուդյան Արաբիան, Իրանը, Վենեսուելան և Ռուսաստանը: Վերջիններս փորձում են նավթի վաճառքով զբաղվող մասնագիտացված բորսաներ ստեղծել կամ իրենց տարածքներում, կամ իրենց կողմից վերահսկվող բորսաներում, բայց, որպես, կանոն այդ ծրագրերը ձախողվել են, և էական առաջընթաց չի գրանցվում. նավթի գնի

[4] Crude Oil & Natural Gas, http://www.bloomberg.com/energy

ձևավորումը շարունակում է իրականանալ հիմնականում Նյու Յորքի ու Լոնդոնի բորսաներում:

Նավթի գնագոյացման վրա ազդող վերջին գործոնը *դոլարայինն* է: Ինչպես հայտնի է, նավթը բորսայական այն եզակի ապրանքներից է, որը վաճառվում է միայն դոլարով: Նույնիսկ Լոնդոնի բորսայում նավթի առքուվաճառքն իրականացվում է այդ արժույթով, հետևաբար դոլարի փոխարժեքի տատանումն արժութային շուկայում հակառակ համեմատական ազդեցությունն է թողնում նավթի գնի վրա:

Այսինքն՝ նավթի գնի անկման պայմաններում միջազգային բորսաներում ուժեղանում է դոլարի դիրքը մյուս արժույթների նկատմամբ, և տեղի կունենա հակառակը նավթի գների բարձրացման դեպքում: Այս երևույթը տեղի ունեցավ նաև նավթի գնի վերջին նվազման շրջանում ևս, 2014-2016թթ. ընթացքում դոլարի դիրքերը շարունակաբար ամրանում էին միջազգային հիմնական արժույթների նկատմամբ:

Սա նավթի գնի վրա ազդելու քաղաքական կամ արժութային այն լծակն է, որ ուղղակիորեն գտնվում է ԱՄՆ դաշնային պահուստային համակարգի (*US Federal Reserve System*) վերահսկողության ներքո, և վերջինիս կողմից դոլարի տոկոսադրույքի վերաֆինանսավորման փոփոխությունը կարող է ազդել նաև նավթի գնի վրա միջազգային շուկայում: 2015թ. դեկտեմբերին դոլարի վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացումը ԱՄՆ դաշնային պահուստային համակարգի կողմից մինչև 0.5% (ի դեպ, նման բարձրացում չէր կատարվել 2006թ. սկսած) հանգեցրեց դոլարի դիրքերի ամրապնդմանը միջազգային շուկայում և համապատասխանաբար նավթի գնի կտրուկ անկմանը[5]:

Նավթի աճող պահանջարկով է բացատրվում նաև ԱՄՆ արժույթի նկատմամբ նման բարձր պահանջարկն ամբողջ աշխարհում:

Նավթի գնագոյացումն աշխարհատնտեսական և աշխարհաքաղաքական գործընթաց է, որի վրա ազդելու ցանկացած հնարավորություն աշխարհառազմավարական առավելություն է տալիս այս կամ այն պետությանը: Հետևաբար, պայքարն ազդեցության այդ գործընթացում տեղ զբաղեցնելու համար շարունակական է լինելու: Այդ պայքարին հավասարապես մասնակցում

[5] Fed Raises Key Interest Rate for First Time in Almost a Decade, http://www.nytimes.com/2015/12/17/business/economy/fed-interest-rates.html?_r=0

են թե՛ նավթ արդյունահանող ու այն սպառող խոշոր խաղացողները, թե՛ մասնավոր ընկերությունները և անհատները:

Պետք է հատուկ շեշտել, որը վեր նշված չորս գործընթացները չունեն նավթի գնի վրա ազդելու երկարատև ռեսուրս, դրանք ժամանակավոր են և փոփոխվում են՝ պայմանավորված այդ գործոնների համադրությունից ու համընկնումներից: Հետևաբար, առանձին վերցրած մեկ պետություն նավթի գնագոյացման վրա ազդելու ռեսուրս չունի, դրան կարելի է հասնել միայն միջազգային պայմանավորվածությունների և պայմանագրերի շնորհիվ, սակայն այդ գործընթացները ևս երկարատև ազդեցություն նավթի գնի վրա ունենալ չեն կարող:

Թերևս, նավթի գնագոյացման հետաքրքիր կողմերից մեկն էլ հենց այդ է, որ չնայած առկա լծակներին, նավթի գնի վրա արհեստական կերպով ազդելու հնարավորություններին՝ այն երկար ժամանակով փոխելն անհնար է:

Հուշագիր հեղինակին

«Գլոբուս» վերլուծական հանդեսը հրապարակում է վերլուծական բնույթի հոդվածներ՝ նվիրված Հայաստանի և Հայության ռազմաքաղաքական, տեղեկատվական և վերջինիս մեջ ընդգրկված քաղաքակրթական ու հոգևոր անվտանգության խնդիրներին, հայկական համայնքների և տարալեզու-տարադավան հայերի կազմակերպչական անվտանգության հիմնահարցերին:

«Գլոբուս» ամսագրի խմբագրական խորհրդի կողմից *պատվիրված* նյութերը հանդիսանում են «Նորավանք» ԳԿՀ-ի սեփականությունը: Ձեռագրերը գրախոսվում են: «Գլոբուս» հանդեսի հրապարակումները արտահայտում են հեղինակների տեսակետները:

Հոդվածների ներկայացման ձևը

1. Հոդվածները ներկայացվում են տպագիր և համակարգչային շարվածքով (*MS WORD* ծրագրով), «*Sylfaen»* տառատեսակով, 11 տառաչափով (ֆոնտով), ծավալը չպետք է գերազանցի 7 էջը:
2. Առաջին անգամ հոդված ներկայացնելիս պարտադիր կցել հեղինակի ինքնակենսագրությունը *(CV)*:
3. Էջը պետք է համապատասխանի A4 չափին, լուսանցքները ձախից, աջից, վերևից ու ներքևից՝ 2 սմ: Տողերի միջև հեռավորությունը՝ 1.5:
4. Ինտերնետային աղբյուրների հղումները նշել տողատակում:

Խմբագրություն

«ԳԼՈԲՈՒՍ» ամսագիր
Խմբագրական խորհուրդ

Հիմնադիր՝ «ՆՈՐԱՎԱՆՔ» գիտակրթական հիմնադրամ
ՀՀ Արդարադատության նախարարության
Պետական ռեգիստրի վկայական թիվ 221 տրված 17.05.2001թ.
Հասցե՝ ՀՀ, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1
Կայք՝ www.noravank.am
Էլ.-փոստ՝ globus@noravank.am, office@noravank.am
Հեռախոս՝ + (374 10) 44 38 46
Ֆաքս + (374 10) 44 04 73

Համարի պատասխանատու՝ Լուսինե Բաղրամյան

Հանձնված է տպարան 01.08.2016թ.
Թիվ 6 (75), 2016թ.
Տպաքանակը՝ 150։

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70x100 1/16
Պայմանական 4 մամուլ։ Տառատեսակը՝ Sylfaen
Տպագրվել է «ԹԱՍԿ» ՍՊԸ տպարանում